

ԴԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ

2017 թվականին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրվել է սահմանադրաիրավական խնդիր բովանդակող 210 դիմում, ինչպես նաև ներկայացվել են 990 էլեկտրոնային /այդ թվում՝ 700 խորհրդատվություն հայցող/ դիմում և տարբեր հարցերի առնչվող 213 նամակ: Պատասխանվել է խորհրդատվություն ակնկալող 172 հարցման:

Սահմանադրաիրավական խնդիր բովանդակող դիմումների փաստացի պատկերն այսպիսին է.

1. ՀՀ Նախագահ – 27 դիմում,
2. ՀՀ Ազգային ժողով – 0 դիմում,
3. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդ – 1 դիմում,
4. ՀՀ կառավարություն – 0 դիմում,
5. տեղական ինքնակառավարման մարմիններ – 0 դիմում,
6. ֆիզիկական անձինք – 146 դիմում,
7. իրավաբանական անձինք – 19 դիմում,
8. դատարաններ – 4 դիմում,
9. ՀՀ գլխավոր դատախազ – 2 դիմում,
10. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան – 4 դիմում,
11. Հանրապետության Նախագահի թեկնածուներ – 0 դիմում,
12. կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ) և պատգամավորության թեկնածուներ – 1 դիմում:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց թվով 165 դիմումներից 107-ը չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28-րդ հոդվածներով, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 18, 32, 33 և 34-րդ հոդվածներով սահմանված` դիմումին ներկայացվող պահանջներին և աշխատակազմի կողմից վերադարձվել են դիմողներին:

Դատական կազմերն ստացել են 58 (քաղաքացիների և իրավաբանական անձանց) անհատական դիմում: Դրանցից քննության է ընդունվել 20-ը, մերժվել` 34-ը, չորսը փոխադրվել է Սահմանադրական դատարանի լիազումար նիստ: Նշված 20 դիմումներից 4 դիմումների հիման վրա գործերի վարույթները սահմանադրական դատարանի 30.05.2017թ. ՍԴԱՌ-38, 13.06.2017թ. ՍԴԱՌ-42, 11.07.2017թ. ՍԴԱՌ-43 և 27.09.2017թ. ՍԴԱՌ-56 աշխատակարգային որոշումներով կարճվել են: 2 անհատական դիմումով գործը քննության ընդունելու կամ գործի քննությունը մերժելու հարցը ընթացքի մեջ է:

Սահմանադրական դատարանի լիազումար նիստերում անհատական դիմումների հիման վրա (քաղաքացիների և իրավաբանական անձանց) քննվել և վերջնական որոշում է կայացվել 19 գործով, գլխավոր դատախազի դիմումների հիման վրա` 3 գործ, ԱԺ պատգամավորների դիմումների հիման վրա` 2 գործ, դատարանների դիմումների հիման վրա` 4 գործ, Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա` 2 գործ (այս բոլորը Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով): Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով որոշում է կայացվել 31 գործով, ընտրական վեճերով` 1 գործով, ընդամենը` 62 գործ:

2017 թվականին ՀՀ սահմանադրական դատարանը քննության է առել 23 իրավական ակտերի (բացի միջազգային պայմանագրերից)` 17 օրենքների (որոնցից 8-ը` օրենսգիրք), ՀՀ կառավարության 2 որոշումների, տեղական ինքնակառավարման մարմինների 4 որոշումների սահմանադրականության հարցեր:

ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հարցերով քննության է առել վիճարկվող 4 ակտերի՝ ամբողջությամբ, և վիճարկվող ակտերի 71 իրավադրույթների (ներառյալ՝ կոնկրետ գործերով վեճի առարկա դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված 2 դրույթի) սահմանադրականության հարցեր, որոնց արդյունքում.

- վիճարկվող 1 ակտ՝ ամբողջությամբ, և վիճարկվող ակտերի 13 իրավադրույթներ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող.

- վիճարկվող ակտերի 41 իրավադրույթներ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական կոնկրետ բովանդակությամբ.

- վիճարկվող ակտերի 4 իրավադրույթներ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր.

- վիճարկվող ակտերի 22 իրավադրույթների մասով կայացվել են գործի վարույթը կարճելու մասին որոշումներ.

- 1 որոշմամբ՝ 10.11.2017թ. ՄԴՈ-1384, սահմանվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավադրույթի ուժը կորցնելու կոնկրետ վերջնաժամկետ.

- տեղական ինքնակառավարման մարմինների՝ վիճարկվող 4 ակտերի մասով ամրագրվել է, որ դրանք ակտերը կորցնում են իրենց իրավաբանական ուժը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 11-րդ մասի հիմքով՝ ՄԴՈ-1384 որոշմամբ նախատեսված վերջնաժամկետի ավարտման պահից:

**ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

**ՀՀ Նախագահի դիմումների հիման վրա ընդունված ՄԴ որոշումները և
դրանց կատարումը**

2017 թվականին ՀՀ Նախագահի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված բոլոր դիմումները վերաբերել են բացառապես միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշմանը:

2017թ. ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության են առնվել թվով 32 միջազգային պայմանագրերով ստանձնված պարտավորությունների սահմանադրականության որոշման վերաբերյալ գործեր /որոնցից 6-ը քննության էին ընդունվել 2016 թվականին/:

Քննության առնված 31 միջազգային պայմանագրերից 13-ը բազմակողմ են, 18-ը՝ երկկողմ (12-ը՝ օտարերկրյա պետությունների, իսկ 6-ը՝ միջազգային կազմակերպությունների հետ): ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության առնված 31 միջազգային պայմանագրերից 27-ն արդեն վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից:

Քննության առնված միջազգային պայմանագրերով ստանձնված պարտավորությունների սահմանադրականության հարցը լուծելիս Սահմանադրական դատարանն արտահայտել է մի շարք սկզբունքային իրավական դիրքորոշումներ, մասնավորապես.

Ա/ քննության առնելով «2016 թվականի հոկտեմբերի 13-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին» պայմանագրի շրջանակներում մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի առկայության և նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության իրականացման

կարգի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, իր՝ ՄԴՈ-1335 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է.

«Վաճառվող զենքի նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնելու ինստիտուտի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջինս բխում է ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված մի շարք իրավական ակտերում (1991թ. դեկտեմբերի 6-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված 46/36H հռչակագրում, «Ձենքի միջազգային առևտրի մասին» ՄԱԿ-ի 2013թ. պայմանագրում, 2000 թվականին Նորբեյյան խաղաղության մրցանակակիրների կողմից առաջարկված և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված՝ «Ձենքի մատակարարման վարքագծի միջազգային օրենսգիրք» վերտառությամբ փաստաթղթում) ամրագրված հիմնարար սկզբունքների պահպանման անհրաժեշտությունից, ինչի դեպքում միայն պետությունները պետք է իրականացնեն զենքի վաճառքի գործարքները:

Միաժամանակ, միջազգային իրավունքում ամրագրված սկզբունքների վերլուծությունը վկայում է, որ վաճառող պետության կողմից **վաճառված զենքի նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության իրականացումը պետք է հետապնդի հետևյալ նպատակները.**

ա/ զերծ մնալ զենքի վաճառքից, եթե.

- նման վաճառքը կխախտի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից սահմանված և պետության կողմից ստանձնված պարտավորությունները, մասնավորապես զենքի էմբարգոները,

- նման վաճառքը կխախտի միջազգային համաձայնագրերով պետության կողմից ստանձնված այն պարտավորությունները, որոնք, մասնավորապես, վերաբերում են սովորական սպառազինության փոխանցմանը կամ դրա անօրինական շրջանառության կանխմանը,

- վաճառքի մասին որոշում կայացնելու պահին վաճառող պետությունը հավաստի տեղեկացված է, որ այդ զենքը կամ ռազմամթերքն օգտագործվելու է ցեղասպանության ակտ, մարդկության դեմ կատարվող հանցագործություն, 1949թ. ժնկյան կոնվենցիաների լրջագույն խախտումներ, քաղաքացիական օբյեկտների կամ քաղաքացիական բնակչության վրա /որոնք որպես այդպիսիք պաշտպանության տակ են/ հարձակվելու կամ միջազգային համաձայնագրերով սահմանված այլ ռազմական հանցագործություններ կատարելու նպատակով,

բ/ եթե բացակայում են զենքի վաճառքի համար խոչընդոտ հանդիսացող վերոհիշյալ հանգամանքները՝ ղեկավարվելով վաճառող պետության հսկողական ազգային համակարգով, օբյեկտիվ և անխտրական կերպով գնահատել հավանականությունը, թե արդյո՞ք զենքը և զինամթերքը՝

- կնպաստի խաղաղությանը և անվտանգությանը, թե՛ կվնասի դրանց,

- կարող է օգտագործվել հումանիտար իրավունքի խախտմանն ուղղված հանցագործության կատարմանը կամ դրա աջակցմանը, մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերի լրջագույն խախտմանը կամ դրա աջակցմանը, միջազգային կոնվենցիաներով կամ ահաբեկչության մասին, ինչպես նաև անդրազգային հանցագործությունների մասին արձանագրություններով հանցագործություն համարվող գործողությունների կատարմանը կամ դրանց աջակցմանը:

Քննության առարկա Համաձայնագրի շրջանակներում, քանի որ այլ պարզաբանումներ առկա չեն, Սահմանադրական դատարանը Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների սահմանադրականությունը՝ **«նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն»** դրույթի առնչությամբ, դիտարկում է միջազգային իրավունքի վերոնշյալ սկզբունքների համատեքստում:

Բ/ Քննության առնելով «2017 թվականի ապրիլի 11-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, իր՝

ՄԴՈ-1381 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձ է կատարել հիշյալ միջազգային պայմանագրի՝ որպես իրավական ակտի բնույթին, և տարանջատել է դրանով կարգավորվող հորիզոնական և ուղղահայաց հարաբերությունները՝ արձանագրելով, որ ՀՀ սահմանադրական դատարանում նախնական սահմանադրական վերահսկողության առարկա կարող են դառնալ Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային պայմանագրերով ստանձնված միջպետական /հորիզոնական/ պարտավորություններ նախատեսող նորմերը: Հիշյալ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է.

«5. Ուսումնասիրելով քննության առարկա միջազգային պայմանագրի՝ որպես իրավական ակտի բնույթը, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ ակտն ըստ էության դասվում է *վերազգային* իրավունքի աղբյուրների շարքին: Դասական իմաստով միջազգային իրավունքի և վերազգային իրավունքի տարբերությունը հիմնականում այն է, որ վերջինիս նորմերով կարգավորում են ոչ միայն պետությունների միջև **/հորիզոնական/**, այլ նաև պետության ներսում գործող **/ուղղահայաց/** հարաբերություններ:

Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան վկայում է, որ վերազգային իրավունքի աղբյուր հանդիսացող ուղղահայաց իրավահարաբերություններ կարգավորող օրենսդրական ակտերի նկատմամբ նախնական սահմանադրական վերահսկողության իրականացումն օբյեկտիվորեն չի կարող երաշխավորել հետագայում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների անմիջական գործողության, դրանց սահմանափակման համաչափության և որոշակիության սկզբունքների խախտման, ինչպես նաև այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր ամրագրելու սահմանադրական պահանջների ապահովումը:

Բացի դրանից, հաշվի առնելով Օրենսգրքի ուղղահայաց իրավահարաբերությունները, ներառյալ նաև հանրային իրավունքի բնագավառում վարչական իրավա-

հարաբերություններ կարգավորելու առանձնահատկությունը, դրա սահմանադրականությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը, ինչը հնարավոր չէ իրականացնել նախնական սահմանադրական վերահսկողության շրջանակներում:

6. ՀՀ Սահմանադրության /ինչպես 2005թ., այնպես էլ 2015թ. խմբագրությամբ/ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը վկայում է, որ ՀՀ սահմանադրական դատարանում նախնական սահմանադրական վերահսկողության առարկա կարող են դառնալ Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային պայմանագրերով ստանձնված **միջպետական /հորիզոնական/** պարտավորություններ նախատեսող նորմերը:

«Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանվում է միջազգային պայմանագրի հասկացությունը, որը հանգում է նրան, որ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և միջազգային հանրային իրավունքի նորմերով (այսուհետ՝ միջազգային իրավունք) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության և միջազգային իրավունքի սուբյեկտի, ինչպես նաև սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կազմավորումների միջև ստորագրված և սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած և Հայաստանի Հանրապետության համար պարտադիր դարձած գրավոր համաձայնություն է, որը տվյալ միջազգային պայմանագրով որոշված կարգավորման առարկայի առնչությամբ պայմանագրի կողմերի համար սահմանում է իրավունքներ և պարտականություններ, փոփոխում կամ դադարեցնում է դրանք:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր է համարվում նաև ուժի մեջ մտած այն միջազգային պայմանագիրը, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է սույն օրենքով և միջազգային իրավունքի նորմերով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր է համարվում նաև սույն օրենքով սահմանված կարգով կնքված միջազգային պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին պայմանագիրը»:

Բացի վերոնշյալից, ՀՀ Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ օրենքների դրույթների նկատմամբ, մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից դրանց ընդունումը, ՀՀ սահմանադրական դատարանը նախնական սահմանադրական վերահսկողություն իրականացնելու իրավասություն չունի:

Սույն պայմանագրով նախատեսվող ուղղահայաց իրավահարաբերություններ կարգավորող նորմերն իրենց բնույթով հանդես են գալիս որպես օրենքին բնորոշ դրույթներ, որոնց ընդունումը՝ առանց նախնական սահմանադրական վերահսկողության պայմանի, ՀՀ Սահմանադրությունը վերապահել է օրենսդիր մարմնին:

7. ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձ կատարել նաև «2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով կայացված իր՝ 14.11.2014թ. ՄԴՈ-1175 որոշման մեջ արտահայտած դիրքորոշումներին, որոնք կիրառելի են նաև սույն գործի շրջանակներում:

Մասնավորապես, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ. «ՀՀ Սահմանադրության նախաբանում հավաստելով իր հավատարմությունը համամարդկային արժեքներին, սահմանադրական կարգի հիմունքներով արտաքին քաղաքականության իրականացման հիմքում դնելով միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը, իրավական, ժողովրդավարական պետության կայացման գործում գերակայություն վերապահելով միջազգային իրավունքին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը որևէ սահմանափակում չի նախատեսում միջազգային ու տա-

րածաշրջանային համագործակցության ու այն ապահովող կառույցների իրավաչափ գործունակության ապահովման հարցերում:

Մակայն դրա համար առկա են նաև սահմանադրական հստակ պահանջներ, որոնք բխում են ՀՀ Սահմանադրության թե՛ արժեքանությունից և թե՛ մի շարք կոնկրետ դրույթներից: Դրանք են.

- 1) պետական, ժողովրդական ու ազգային ինքնիշխանության երաշխավորումը,
- 2) միջազգային հարաբերությունների իրավահավասարությունն ու փոխշահավետությունը,
- 3) մարդու իրավունքների միայն այնպիսի հնարավոր սահմանափակումների նախատեսումը, որոնք համարժեք են միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին,
- 4) Հայաստանի համար վերպետական մարմինների որոշումների գործողության հնարավորությունը միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության շրջանակներում:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ որևէ վերպետական մարմնի կողմից ընդունված ցանկացած որոշում, որը չի համապատասխանում այդ պահանջներին, կիրառելի չէ Հայաստանի Հանրապետությունում»:

8. Վերոգրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրական դատարանում սույն գործի շրջանակներում նախնական սահմանադրական վերահսկողության առարկա կարող են դառնալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ հորիզոնական իրավահարաբերություններ կարգավորող և պետության համար պարտավորություններ սահմանող նորմերը: Իսկ վերազգային իրավունքի աղբյուր հանդիսացող, բովանդակային առումով «օրենք» կատեգորիային համապատասխանող և ուղղահայաց իրավահարաբերություններ կարգավորող իրավունքի նորմերը կարող են ՀՀ սահմանադրական դատարանում սահմանադրական վերահսկողության առարկա հանդիսանալ «հետագա սահմանա-

դրական վերահսկողության» կարգով՝ հաշվի առնելով նաև դրանում ամրագրված որևէ դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը»:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների դիմումների հիման վրա ընդունված ՄԴ որոշումները և դրանց կատարումը

Սահմանադրական դատարանը 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների դիմումների հիման վրա քննության է առել երկու գործ, որոնցից մեկը՝ 2016 թվականի նոյեմբերի 17-ին Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի, իսկ մյուսը՝ 2017 թվականի հունիսի 9-ին ներկայացված դիմումի հիման վրա: Այսպես.

1. «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 07.03.2017 թվականի ՄԴՈ-1356 որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Սահմանադրական դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման իրավակարգավորման շրջանակներում որևէ այլ նախապայման (բացի ընտրական իրավունքի իրացման սկզբունքների պահպանումից), ի տարբերություն ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների, սահմանված չէ:

ՀՀ Սահմանադրության (2015 թ. փոփոխություններով) 89-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովում կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման, հետևաբար և՛ համապատասխան ընտրակարգի սահմանման հայե-

ցողությունը վերապահվել է օրենսդիր մարմինն, որի իրացման սահմանադրաիրավական պայմանը նման մեծամասնության ձևավորումն է: ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի 2-րդ մասն ամբողջությամբ ՀՀ ընտրական օրենսգրքին է վերապահել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգի սահմանումը: Սակայն, որևէ սահմանադրաիրավական հիմք առկա չէ այդ կարգերի նույնական կամ համանման լինելու առնչությամբ:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ չնայած ՀՀ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում մանդատների բաշխման ընթացակարգերը տարբեր են, սակայն երկու դեպքում էլ դրանք հետապնդում են համանման նպատակ, այն է՝ սահմանված որոշակի նվազագույն տեղեր կամ քվեներ ստացած կուսակցությանը հավելյալ տեղեր (մանդատներ, բոնուսներ) տրամադրելու միջոցով ապահովել որոշակի մեծամասնություն՝ կայուն կառավարում ապահովելու նպատակով: Դա նույնպես Սահմանադրությունից բխող իրավաչափ նպատակ է, սակայն չի կարող հիմք հանդիսանալ այդ երկու գործընթացների իրավակարգավորումները նույնականացնելու համար: Ելնելով համապետական և տեղական ընտրությունների բնույթից ու դրանց առանձնահատկություններից՝ Սահմանադրությունը, ինչպես նշվեց, բացառապես օրենսդրին է վերապահել ընտրակարգի ձևի ու բովանդակության (մոդելի) ընտրության և տվյալ հարաբերությունների իրավակարգավորման հայեցողությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ.

ա/ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության կարգի որոշումը ՀՀ Սահմանադրությունը բացառապես վերապահել է օրենսդրի հայեցողությանը: Հետևաբար, Սահմանադրական դատարանը չի բացառում, որ օրենսդիրն իր քաղաքական կամքի դրսևորման արդյունքում կարող է նաև նախապատվությունը տալ այլ ընտրակարգի,

բ/ օրենսդրին է վերապահված նաև ընտրական հարաբերություններում որոշում կայացնելու համար ընտրակարգի բնույթից ելնելով ձայների տարբեր հարաբե-

րակցություն սահմանելու հայեցողությունը, որը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունից: Քննության առարկա գործով ձայների «բացարձակ մեծամասնություն» եզրույթը ՄԴՈ-1356 որոշման 9-րդ կետում Սահմանադրական դատարանի կողմից ներկայացված բովանդակությանը համապատասխան ընկալվելու ու կիրառվելու դեպքում սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել,

զ/ ցանկացած ընտրակարգին նախապատվություն տալու հայեցողական ազատության պարագայում պետք է երաշխավորվի համաչափությունն ընտրված միջոցի և հետապնդվող նպատակի միջև, ինչի բացակայության վերաբերյալ դիմողները հիմնավոր փաստարկներ չեն ներկայացրել,

դ/ Սահմանադրությունն օրենսդրին է վերապահել նաև ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների տարբեր ընթացակարգեր սահմանելու հայեցողությունը և դրանցից մեկի կամ մյուսի ենթադրյալ «առավելությունների» կամ «թերությունների» վկայակոչումը կամ դրանց բացարձակ համադրելիության վերաբերյալ փաստարկները չեն կարող դիտարկվել որպես ՀՀ ընտրական օրենսգրքի նորմերի սահմանադրականությանը վերաբերելի խնդիր:

2. «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 69-րդ հոդվածի 1-ին մասի, Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի N 2-Ն, 7-Ն, 8-Ն, 9-Ն որոշումների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2017 թվականի նոյեմբերի 10-ի ՄԴՈ-1384 որոշմամբ որոշել է.

«1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 6-րդ, 9-րդ և 179-րդ հոդվածների պահանջներին հակասող:

2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակում:

3. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակում:

4. Հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները և վեճի առարկա օրենքի դրույթների՝ դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը, փաստելով սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավադրույթի համակարգային առումով փոխկապվածությունը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի իրավակարգավորումների հետ, ինչպես նաև նկատի ունենալով օրենքի պահանջը՝ իրավական անվտանգությունը չխաթարելու վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2018 թվականի մարտի 31-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

5. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի N 2-Ն, 7-Ն, 8-Ն, 9-Ն որոշումները կորցնում են իրենց իրավաբանական ուժը «Սահմանադրական

դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 11-րդ մասի հիմքով՝ սույն որոշմամբ նախատեսված վերջնաժամկետի ավարտման պահից»:

ՄԴՌ-1384 որոշմամբ Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ ելնելով այս կամ այն մարմնի իրավական կարգավիճակի (գործառույթների շրջանակի) առանձնահատկություններից՝ հանրային իշխանության բնագավառում կոլեգիալ և միանձնյա կառավարման տարանջատման չափանիշներից են հանրային իշխանության մարմինների կողմից ընդունվող պաշտոնական փաստաթղթերի (որոշումների) ընդունման պայմաններն ու կարգը: Կոլեգիալ մարմինների հանրային-իշխանական գործունեության կարգավորման հիմքում առաջնահերթ կարևորվում են որոշում (կամ պաշտոնական այլ փաստաթուղթ) ընդունելու իրավական անհրաժեշտությունը, իսկ որոշ դեպքերում՝ հրատապությունը, մյուս կողմից՝ օբյեկտիվ պատճառներով կոլեգիալ մարմնի նիստին տվյալ մարմնի բոլոր անդամների մասնակցությունն ապահովելու անհնարինության պայմաններում այդ մարմնի բնականոն գործունեությունն ապահովող նվազագույն պայմանների, այն է՝ կոլեգիալ մարմնի անհրաժեշտ նվազագույն թվով անդամների մասնակցությամբ որոշումների ընդունման երաշխավորումը: Ընդ որում, դեպքերից որևէ մեկին նախապատվություն չի կարող տրվել: Անհրաժեշտ է ողջամիտ հավասարակշռություն նշված դեպքերի միջև՝ այն հաշվով, որպեսզի չխաթարվի ժողովրդավարական պետության էությունը:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ այդպիսի հավասարակշռությունը ենթադրում է կոլեգիալ մարմնի նիստերին տվյալ մարմնի անդամների անհրաժեշտ այնպիսի թվաքանակի ներկայություն, որը ճանաչելի կդարձնի տվյալ մարմինը որպես այդպիսին, կերաշխավորի նրա կողմից լեգիտիմ որոշումներ կայացնելու կարողունակությունը: Այսինքն՝ կոլեգիալ մարմնի նիստի իրավագործության առումով կոլեգիալ մարմնի նիստին տվյալ մարմնի անդամների ընդհանուր թվի առնվազն պարզ մեծամասնության ներկայությամբ է պայմանավորվում ժողովրդավարական պետությունում կոլեգիալ մարմնի լեգիտիմ գործունեությունը:

Մահմանադրական դատարանն ամրագրել է նաև, որ՝ **յուրաքանչյուր ներկայացուցչական մարմին, լինի դա խորհրդարան, թե՛ համայնքի ավագանի, իր լիազորություններն իրականացնելիս, այդ թվում որոշումներ ընդունելիս պետք է առաջնորդվի բացառապես իրավական և ժողովրդավարական պետության սկզբունքներով, իր գործունեությունն իրականացնի այնպես, որ հանրային իշխանության կոլեգիալ մարմնում Մահմանադրությամբ կամ օրենքով սահմանված քվորումի հիման վրա որոշումներն ընդունվեն բազմակարծության երաշխավորման ու տվյալ մարմնի իրավազորության առկայության պայմաններում:** Մահմանադրական դատարանը կարևորում է կոլեգիալ մարմնի գործունեության իրավակարգավորման հիմքում հիշյալ իրավապայմանների առկայությունը, առանց որի կիմաստագրկվի կոլեգիալ կառավարման սահմանադրական սկզբունքի էությունը՝ ընդհանրապես, և «քվորումի» ինստիտուտը՝ մասնավորապես:

Խնդիրը կայանում է նրանում, որ օրենսդիրը համայնքի ավագանու նիստերի իրավազորության և որոշումների կայացման կարգի հետ կապված դրսևորել է երկակի մոտեցում՝ **ընդհանուր կարգով նիստերի իրավազորության համար սահմանելով ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելիի ներկայության պահանջ**, իսկ Գյումրու, Վանաձորի և Երևանի համայնքների ավագանիների համար, իրավազորությունը պայմանավորելով որոշումների ընդունման հետ՝ նվազագույն շեմ է սահմանել ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ քառորդը: Այնինչ նիստի իրավազորության նվազագույն շեմի օրենսդրական սահմանումն անհրաժեշտ է, քանի որ հանրային իշխանության կոլեգիալ մարմնի նիստի իրավազորությունը և որոշումներ կայացնելու իրավազորությունը նրա գոյության և գործունեության կարևոր բաղադրիչներն են: Նման իրավակարգավորման արդյունքում, ինչպես արձանագրել է Մահմանադրական դատարանը տվյալ գործով, գործնականում Գյումրի և Վանաձոր համայնքներում զուգահեռաբար կարող են գումարվել նույն ավագանու երեքական առանձին նիստեր և ընդունվել միևնույն հարցի վերաբերյալ տարաբնույթ որոշումներ: Այսինքն՝ Գյումրի և Վանաձոր համայնքներում

«օրինական» ճանապարհով հիմք է ստեղծվում ավագանու անդամների տարբեր խմբերի միաժամանակյա իրավաստեղծ գործունեության իրականացման հնարավորության համար, ինչն անթույլատրելի է նաև սահմանադրական արժեքանության և իրավունքի գերակայության երաշխավորման տեսանկյունից:

ՄԴՈ-1384 որոշմամբ անդրադառնալով Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի N 2-Ն, 7-Ն, 8-Ն, 9-Ն որոշումների սահմանադրականության հարցին, Սահմանադրական դատարանը նշել է, որ դիմող կողմը դրանք վիճարկում է ոչ թե տվյալ ակտերի իրավական բովանդակության, այլ ընդունման իրավասության տեսանկյունից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

նախ` ՀՀ Սահմանադրությունը համայնքի ավագանու կողմից նորմատիվ որոշումներ ընդունելու որևէ կարգ չի ամրագրում, ուստի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով «ըստ ձևի» տվյալ ակտերի սահմանադրականության գնահատումը կարող է տեղի ունենալ դրանց ընդունման պահին գործող օրենսդրական նորմերով ամրագրված ընթացակարգի սահմանադրականության գնահատման համատեքստում,

երկրորդ` վիճարկվող ակտերն ընդունվել են դրանց ընդունման պահին գործող օրենսդրական նորմերով ամրագրված ընթացակարգին համապատասխան,

երրորդ` դրանց նկատմամբ կիրառելի է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջը, համաձայն որի` «Անվավեր ճանաչված նորմատիվ ակտի կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտերի համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը` վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ միաժամանակ»:

Սույն գործով իր որոշման կատարման վիճակի վերջնական գնահատականը Սահմանադրական դատարանը կտա դատարանի կողմից ՄԴՈ-1384 որոշմամբ սահմանված վերջնաժամկետի ավարտից հետո:

**Անհատական (ֆիզիկական և իրավաբանական անձանց) դիմումների
հիման վրա ընդունված ՄԴ որոշումներն ու դրանց կատարումը**

Սահմանադրական դատարան մուտքագրված անհատական դիմումների մոտ 65 տոկոսը Սահմանադրական դատարանի կողմից չի ընդունվել, քանի որ դրանք կամ չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28-րդ հոդվածներով և/կամ ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 32 և 33-րդ հոդվածներով սահմանված՝ անհատական դիմումին ներկայացվող պահանջներին, կամ ճանաչվել են որպես ակնհայտ անհիմն, կամ վիճարկվող նորմը դատարանի կողմից դիմողի նկատմամբ չի կիրառվել: Հիմնականում նման անհատական դիմումները վերաբերում են օրենքների կիրառմանն առնչվող հարցերին կամ ընդհանուր իրավասության ու մասնագիտացված դատարանների իրավագործությանը վերաբերող այլ հարցերի:

Սահմանադրական դատարանի կողմից 2017թ. քննության ընդունված 11 գործերով որոշումները կայացվելու են 2018թ. հունվար-ապրիլ ամիսներին:

2017 թվականի ընթացքում քննության առնված չորս գործերով օրենքի վիճարկվող դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: Մասնավորապես.

1. «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության դիմումների հիման վրա՝ ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 10-րդ մասի, 117-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 20.06.2017 թվականի ՄԴՈ-1374 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 10-րդ մասը՝ այն մասով, որով դատավորների թեկնածությունների ցուցակ ընդգրկված հավակնորդների հոգեբանական թեստի արդյունքները, որոնք վերաբերում են նրանց հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման որակներին, ենթակա չեն հրապարակման, և

այդ ցուցակը Հանրապետության Նախագահի կողմից հաստատվելուց հետո ենթակա է ոչնչացման, ճանաչել ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասին, մասնավորապես՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունն ամրագրող դրույթին հակասող և անվավեր»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ դատավորի պաշտոնի հավակնորդների համար անցկացվող հոգեբանական թեստի արդյունքները հրապարակման ենթակա չէին, չէին տրամադրվում երրորդ անձանց և ոչնչացվում էին, ինչը սահմանափակում էր դատավորի պաշտոնի հավակնորդների, երրորդ անձանց, այդ թվում՝ կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված հասարակական կազմակերպությունների՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու սահմանադրական ազատությունը:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանը վերահաստատել է իր՝ 2012 թվականի մարտի 6-ի ՄԴՈ-1010 որոշմամբ արտահայտած այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «... Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և հանրության առջև պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը»:

ՄԴՈ-1374 որոշմամբ Սահմանադրական դատարանը հստակ ամրագրել է, որ օրենսդիրը պարտավոր է դատավորի պաշտոնի հավակնորդների որակավորման քննության ու հանրային գործառույթ իրականացնելու պիտանելիության գնահատման իրավակարգավորման հիմքում դնել այնպիսի տեղեկատվություն, ինչը, մի կողմից, կհամարվի անհրաժեշտ մրցույթ իրականացնելու և ընտրություն կատարելու համար, մյուս կողմից՝ վերաբերելով թեկնածուների հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման որակներին, մատչելի կլինի հասարակության համար

ու կրթարձրացնի պետաիշխանական լիազորություն ստանձնողի նկատմամբ հանրային վստահությունը:

Առաջնորդվելով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ հանրային վերահսկողությունը, հանրային իշխանության գործողությունների թափանցիկությունը, հաշվետու գործունեությունը, հանրային-իրավական պատասխանատվությունն ապահովելու նկատառումներով՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ դատավորների թեկնածությունների ցուցակի կազմմանը և հաստատմանը նախորդող գործընթացներում հավակնորդի կողմից ներկայացված, հավակնորդի վերաբերյալ կազմվող/ստացվող փաստաթղթերը, տեղեկությունները, դիտարկվող գործընթացների արդյունքները (դրանց վերաբերյալ տեղեկությունները), **ՀՀ Սահմանադրությամբ սահմանված սահմանափակումների նպատակները** հաշվի առնելով, պետք է լինեն բաց, թափանցիկ: Դրանք պետք է վերաբերեն ոչ թե թեկնածուների միջանձնային հարաբերություններում դրսևորվող անձնական կյանքին, այլ նրանց հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման պիտանելիությունը գնահատող որակներին: Ուստի նման տվյալները պետք է ներառվեն հավակնորդի, հետագայում՝ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի անձնական գործում, ենթակա լինեն տրամադրման հավակնորդներին, երրորդ անձանց, այդ թվում՝ կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված հասարակական կազմակերպություններին: Նման տեղեկատվության տրամադրումն անհրաժեշտ է և ուղղված է դատական իշխանության ձևավորման նկատմամբ հանրային վերահսկողության արդյունավետության ապահովմանը, հանրային իշխանության ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության, քաղաքացիական հասարակության և, մասնավորապես, հասարակական կազմակերպությունների դերի բարձրացմանը:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտել է, որ այս մոտեցումը կարևոր նշանակություն պետք է ունենա «Դատական օրենսգիրք» նոր սահմա-

նադրական օրենքի մշակման և ՀՀ Սահմանադրության /2015թ. փոփոխություններով/ դրույթների հետևողական իրացման տեսանկյունից:

Սահմանադրական դատարանի՝ 20.06.2017 թվականի ՄԴՈ-1374 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:

2. «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 26.12.2017թ. ՄԴՈ-1396 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին պարբերությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ պարբերության երկրորդ նախադասության մեջ ամրագրված «միայն մեկ զանգվածային լրատվության միջոց և այդ զանգվածային լրատվության միջոցի ոչ ավելի, քան 50 ներկայացուցիչների» դրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի, 51-րդ հոդվածի 2-րդ մասի, 75-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ հոդվածների և 81-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին հակասող և անվավեր»:

Անհատական դիմումների հիման վրա ընդունված 41 որոշումներով Սահմանադրական դատարանը վեճի առարկա իրավական նորմերը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում: Միաժամանակ, տվյալ որոշումներով արձանագրվել են իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող օրենսդրական բացեր, որոնք

խոչընդոտում են մարդկանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը, կամ տարբեր իրավական հարցերի վերաբերյալ արտահայտելով համապատասխան դիրքորոշումներ: Նշված գործերից ներկայացվում են հետևյալները.

ա/ «Անախդա Աղաջանյանի, Վլադիմիր Աղաջանյանի, Արմեն Աղաջանյանի և Արմինե Աղաջանյանի դիմումի հիման վրա՝ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 31.01.2017թ. ՄԴՈ-1340 որոշմամբ որոշել է.

«1. «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ կառավարիչը կարող է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դիմել և դատական կարգով հետ ստանալ պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում պարտապանի հետ փոխկապակցված անձանց պարտապանի կատարած այն անհատույց փոխանցումները, որոնք դատարանի կողմից կգնահատվեն **որպես պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին ակնհայտորեն վկայող փոխանցումներ**»:

Խնդիրը կայանում է նրանում, որ օրենքի՝ վիճարկվող դրույթի ուժով կառավարիչը կարող էր պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դիմել և դատական կարգով հետ ստանալ պարտապանի կատարած անհատույց փոխանցումները (այդ թվում՝ ոչ դրամային) պարտապանի հետ փոխկապակցված անձանց, որոնք կատարվել են պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում: Տվյալ գործով արձանագրելով, որ թե՛ օրենսդիրը, թե՛ իրավակիրառողը որպես վիճարկվող նորմի նպատակ են դիտարկել պարտատերերի նկատմամբ պարտավորության կատարումից չարամտորեն խուսա-

փելը կանխելը, միննույն ժամանակ Սահմանադրական դատարանը գտել է, որ պարտապանի կատարած ոչ բոլոր փոխանցումները կարող են վկայել պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին: Ըստ այդմ էլ Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ դատարանները պետք է վիճարկվող դրույթը կիրառելիս դրա գործողության շրջանակից բացառեն այն անհատույց փոխանցումները, որոնք ակնհայտորեն չեն վկայում պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին,

բ/ «Արամ Շահբազյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 07.02.2017թ. ՄԴՈ-1344 որոշմամբ որոշել է.

«2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում»:

Խնդիրը կայանում է նրանում, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու առնչությամբ առկա է իրավակարգավորման բաց: Մասնավորապես, օրենսդիրը կանոնակարգել է միայն վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկ դատարանի կողմից վերացվելու դեպքում բողոքը վերաքննիչ դատարանում ընդունելու հետ կապված հարաբերությունները և չի անդրադարձել այն հարցերին, թե ո՞ր պահից պետք է հաշվարկվի և ինչքա՞ն պետք է լինի վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և կրկին ներկայացնելու ժամկետը բոլոր այն դեպքերում, երբ վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը բողոքարկվելու արդյունքում կատարած վերանայումից հետո մերժում է վճռաբեկ

բողոքը: Նշված բացի արդյունքում, եթե անձը չի ուղղում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված՝ վերաքննիչ բողոքում թույլ տրված սխալները, այլ նշված որոշումը վիճարկում է վճռաբեկ դատարանում, իսկ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, ապա անձը չի կարողանում ուղղել վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված՝ վերաքննիչ բողոքում թույլ տրված սխալները և կրկին անգամ վերաքննիչ բողոք ներկայացնել, քանի որ նա արդեն բաց թողած է լինում վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետը:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ վերաքննիչ դատարանը մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումներ սահմանելը պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը վերանայելուց հետո վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, բողոքաբերը պետք է հնարավորություն ունենա այդ որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում վերացնել վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնել:

Հարկ է նկատել, որ տվյալ գործով Սահմանադրական դատարանն ամրագրել է նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից իրավակարգավորման բացը լրացնելու անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանի՝ 07.02.2017 թվականի ՍԴՈ-1344 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել,

զ/ «Աշոտ Քոչարյանի և այլոց դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերա-

բերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 28.02.2017թ. ՄԴՈ-1354 որոշմամբ որոշել է.

«2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այն սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ անկախ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) կիրառման վերաբերյալ անհատական իրավական ակտի կամ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառումը (կատարումը) ապահոված գործողության կամ անգործության առկայության կամ բացակայության փաստից, իրավաբանական կամ ֆիզիկական անձը վարչական դատարան կարող է դիմել օրենքով սահմանված՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի անվավերության հիմքի առկայության դեպքում՝ անվավերության հիմքն առաջանալուց հետո՝ չորսամսյա ժամկետում»:

Խնդիրը կայանում է նրանում, որ նորմատիվ իրավական ակտի վիճարկման համար առկա է թերի կարգավորում: Մասնավորապես, մի օրենքով՝ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով, սահմանվում է որոշակի կառուցակարգ, այն է՝ օրենսդիրը բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման վիճարկման հարցով դատարան դիմելու իրավունք է վերապահում ֆիզիկական կամ իրավաբանական անձին՝ սահմանելով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման անվավերության հիմքերը, մյուս օրենքով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, օրենսդիրը դիտարկվող հարցով դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար ամբողջական իրավակարգավորում չի սահմանում: Ավելին, օրենսդիրը նորմատիվ իրավական ակտի վիճարկման համար որպես պայման է ընդունում, ի թիվս այլնի, վիճարկվող նորմատիվ իրավական ակտի **կիրառումը (կատարումը) ապահոված անգործության** առկայությունը՝ չորսամսյա ժամկետի սկիզբ ընդունելով համապատասխան անգործության օրը: Մինչդեռ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության

օտարման մասին» ՀՀ օրենքով սահմանված են անգործության այնպիսի տեսակներ, որոնք իրենց բնույթով **կոչված չեն ապահովելու** բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման **կիրառումը (կատարումը)**, սակայն հանդիսանում են կառավարության տվյալ որոշման անվավերության հիմք: Ընդ որում, բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումը «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով սահմանված անվավերության հիմքերով դատական կարգով կարող է վիճարկվել **նշված հոդվածներով սահմանված ժամկետների ավարտից հետո**, քանի որ միայն այդ ժամկետների ավարտից հետո պարզ կլինի, որ ձեռքբերողը չի կատարել նշված հոդվածներով նախատեսված գործողությունները:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ դատարանները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասը մեկնաբանելիս և կիրառելիս պետք է առաջնորդվեն ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջներով և երաշխավորեն մարդու դատական պաշտպանության հիմնական իրավունքի արդյունավետ իրականացումը,

դ/ «Ալվարդ Գրիգորյանի և Խաչիկ Գրիգորյանի, «ՄԼԼ Ինդասթրիզ» ՍՊԸ-ի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասի և 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 18.04.2017թ. ՍԴՈ-1363 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ պետք է նշվեն վճռաբեկ բողոքի հետ կապված առկա բոլոր այն թերությունները, որոնք օրենքի համաձայն հիմք են

վճռաբեկ բողոքը վերադարձնելու համար և որոնց շտկելուց հետո բողոքը կհամարվի սահմանված կարգով ներկայացված:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը չի կարող համարվել բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ կայացված Վճռաբեկ դատարանի որոշում»:

Խնդիրը կայանում է նրանում, որ իրավակիրառ պրակտիկայում վճռաբեկ բողոքը վերադարձնելիս Վճռաբեկ դատարանը հաճախ մատնանշում էր վճռաբեկ բողոքում առկա ոչ բոլոր թերությունները, և եթե բողոք բերող անձը Վճռաբեկ դատարանի մատնանշած թերությունները վերացնելուց հետո կրկին անգամ էր բերում վճռաբեկ բողոք, ապա Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը թողնում էր առանց քննության, այսինքն՝ բողոքում առկա թերությունները շտկելու համար վճռաբեկ դատարանը երկրորդ անգամ անձին ժամկետ չէր տրամադրում՝ պատճառաբանելով, որ տվյալ հարցի վերաբերյալ արդեն իսկ առկա է Վճռաբեկ դատարանի որոշում:

Բացի դրանից, եթե բողոքում առկա թերությունը չէր վերաբերում բողոքի տեքստին /օրինակ, կցված չէ բողոքի տեքստը պարունակող էլեկտրոնային կրիչը/, ապա Վճռաբեկ դատարանը պարտավորեցնում էր բողոք բերող անձին էլեկտրոնային կրիչը կցելիս կրկին անգամ Վճռաբեկ դատարան և կողմերին ուղարկել վճռաբեկ բողոքի տեքստը, այլ ոչ թե պարզապես Վճռաբեկ դատարան ներկայացնել էլեկտրոնային կրիչը և համարել, որ վճռաբեկ բողոքում առկա թերությունը վերացված է:

Այդ կապակցությամբ տվյալ գործով Սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ Վճռաբեկ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելն այն հիմքով, որ բողոքում նշված հիմքով նույն գործով Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել, չի վերաբերում վճռաբեկ

բողոքը վերադարձնելու մասին որոշմանն այն պատճառով, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ չի կարող անդրադարձ կատարվել վճռաբեկ բողոքի հիմքերին, քանի որ դատավարության տվյալ փուլում դրանք գործի քննության առարկա չեն դառնում:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանը հատուկ շեշտել է, որ եթե Վճռաբեկ դատարանի մատնանշած թերությունները չեն առնչվում վճռաբեկ բողոքի տեքստին, նույն բողոքի պատճենը գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց կրկին ուղարկելու մասին ապացույցներ ներկայացնելու պահանջը չի բխում ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վերադարձնելիս պետք է մատնանշի դրանում առկա բոլոր թերությունները, այլապես բողոքը պետք է դիտվի որպես ամբողջությամբ նոր բերված բողոք, որի առնչությամբ Վճռաբեկ դատարանը պետք է կայացնի օրենսգրքով նախատեսված որևէ որոշում:

Բացի դրանից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքի բազմակի վերադարձման պայմաններում կարող է արհեստականորեն ձգձգվել բողոքարկվող դատական ակտի ուժի մեջ մտնելը, Սահմանադրական դատարանն ամրագրել է նաև, որ ՀՀ Ազգային ժողովը պետք է նախատեսի այնպիսի կարգավորումներ, որոնք չսահմանափակելով անձի՝ վճռաբեկ բողոք ներկայացնելու արդյունավետ հնարավորությունը, միևնույն ժամանակ ապահովեն բողոքարկվող դատական ակտի ուժի մեջ մտնելու հետ կապված խնդիրների լուծումը և բացառեն հնարավոր չարաշահումները:

Սահմանադրական դատարանի՝ 18.04.2017 թվականի ՄԴՈ-1363 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել,

ե/ «Միշա Պետրոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 25.05.2017թ. ՄԴՈ-1370 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը չի կարող համարվել բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ կայացված Վճռաբեկ դատարանի որոշում»:

Տվյալ գործով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի շրջանակներում դիմողը բարձրացնում է նույն խնդիրը, ինչը որ առկա էր ՄԴՈ-1363 գործով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի շրջանակներում: Այդ պատճառով, ՄԴՈ-1370 գործով Սահմանադրական դատարանը կիրառելի է համարել ՄԴՈ-1363 գործով իր արտահայտած իրավական դիրքորոշումները,

զ/ «Լևոն Բարսեղյանի դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 07.11.2017թ. ՄԴՈ-1383 որոշմամբ որոշել է

«1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումների հստակեցումը և իրավակարգավորման բացի հաղթահարումը ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցման հնարավորությունը պետք է ապահովվի Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների

վերաբերյալ միջազգային պայմանագրերում և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու և քաղաքացու բոլոր հիմնական իրավունքների խախտման դեպքերում:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասում առկա «համարժեք չափ» եզրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ դիտարկվող եզրույթը, մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումների հստակեցումը և իրավակարգավորման բացի հաղթահարումը, ներառում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 և 1087.2-րդ հոդվածներով սահմանված՝ ոչ նյութական վնասի դրամական հատուցման առավելագույն չափերը, ինչպես նաև համապատասխան չափանիշները, որոնք պետք է հաշվի առնի վարչական մարմինն անձին պատճառած ոչ նյութական վնասի դրամական հատուցման չափը որոշելիս»:

Խնդիրը կայանում է նրանում, որ դիտարկվող նորմն անձին իրավունք է վերապահում վարչական մարմնից պահանջելու վերջինիս ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում իրեն պատճառված ոչ գույքային վնասի՝ դրամական միջոցներով հատուցում, սակայն դիտարկվող նորմը պարունակում է իրավակարգավորման բաց, այսինքն՝ լիարժեքորեն չի կարգավորում համապատասխան հարաբերությունը: Մասնավորապես, նորմում բացակայում են ոչ նյութական վնասի դրամական հատուցման առավելագույն չափերը, ինչպես նաև համապատասխան չափանիշները, որոնք պետք է հաշվի առնի վարչական մարմինն անձին պատճառած ոչ նյութական վնասի դրամական հատուցման չափը որոշելիս: Բացի դրանից, նորմը փոխհատուցում ստանալու իրավունքը պայմանավորում է տվյալ անձի ոչ բոլոր իրավունքների խախտմամբ: Այս պարագայում հարց է առաջանում, թե ինչպես պետք է իրացվի անձի՝ վնասի հատուցման իրավունքը, եթե ոչ իրավաչափ վարչարարությամբ խախտվեն սահմանադրական այնպիսի իրավունքներ, որպիսիք նախատեսված չեն վիճարկվող նորմում /նորմը փոխհատուցում ստանալու իրավունքը պայմանավորում է միայն այնպիսի իրավունքների խախտմամբ, ինչպիսիք են՝

Ֆիզիկական անձի ազատությունը սահմանափակելը, նրա անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելը, նրա պատիվը, բարի համբավը կամ արժանապատվությունն արատավորելը, մինչդեռ բարոյական վնասի հատուցման վերաբերյալ ՄԴՈ-1121 որոշմամբ, որում արտահայտված իրավական դիրքորոշումները Սահմանադրական դատարանը կիրառելի է համարել նաև սույն գործով, Սահմանադրական դատարանը բարոյական վնասի հատուցման հնարավորությունը դիտարկել է Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների և ազատությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման տեսանկյունից և չի սահմանափակվել կոնկրետ իրավունքներ նշելով, քանի որ յուրաքանչյուր իրավունքի ամրագրումն արդեն իսկ ենթադրում է ոչ միայն այդ իրավունքի պաշտպանություն ու պատասխանատվության սահմանում դրա խախտումների դեպքում, այլև դրա խախտման արդյունքում պատճառված վնասների հատուցում/:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն արձանագրելով իրավակարգավորման բաց՝ ամրագրել է, որ իրավակիրառողը պետք է մինչև օրենսդիր մարմնի կողմից համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարելը ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցման հնարավորությունն ապահովի Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերում և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու և քաղաքացու բոլոր հիմնական իրավունքների խախտման դեպքերում՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 և 1087.2-րդ հոդվածներով սահմանված՝ ոչ նյութական վնասի դրամական հատուցման առավելագույն չափերը, ինչպես նաև համապատասխան չափանիշները:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն ամրագրել է նաև իրավակարգավորման բացը ՀՀ Ազգային ժողովի կողմից լրացնելու անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանի՝ 07.11.2017 թվականի ՄԴՈ-1383 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել,

է/ «Արամ Հակոբյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 143-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 21.11.2017թ. ՄԴՈ-1387 որոշմամբ որոշել է.

«2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ քրեական վարույթ իրականացնող մարմնի՝ մեղադրյալին կալանքից ազատելու մասին որոշման առկայության պայմաններում հանձնարարականը **չի կարող կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարի համար դատավարական հավելյալ նախապայման հանդիսանալ մեղադրյալին կալանքից ազատելու հարցում»:**

Խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը գրավը մուծված լինելու պայմաններում կալանավորված անձին ազատ արձակելու համար նախատեսում է քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից որոշման կայացում, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 5-րդ մասը՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից անձին ազատ արձակելու հանձնարարական տալը, ինչը ստեղծում է իրավական անորոշություն, որի պայմաններում կալանավորված անձի, նրա պաշտպանի, ինչպես նաև սահմանված չափի գրավը մուծած անձի համար որոշակի չէ, թե հատկապես որ պետական մարմնին պետք է ներկայացվի գրավը մուծված լինելու մասին ապացույցը, որպեսզի անհապաղ միջոցներ ձեռնարկվեն անձին

ագատ արձակելու ուղղությամբ և հնարավոր լինի առավել արագ վերականգնել անձի սահմանափակված իրավունքը:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերլուծության արդյունքում արձանագրել է, որ.

- **դատարանը** լուծում է մեղադրյալի նկատմամբ կալանքը գրավով փոխարինելու, այն նշանակելու (չափը և գրավադրման ձևը որոշելու) հարցը՝ կայացնելով համապատասխան որոշում,

- դատարանի հիշյալ որոշումը կատարվում է քրեական վարույթն իրականացնող համապատասխան այն մարմնի՝ **քննիչի, դատախազի, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարի** կողմից իրենց որոշումներով, որոնց ներկայացվել է գրավի մուծման վերաբերյալ համապատասխան ապացույց,

- այն դեպքերում, երբ գրավի մուծման վերաբերյալ ապացույցը ներկայացվել է քրեական վարույթ իրականացնող քննիչին կամ դատախազին, ապա վերջիններիս որոշմամբ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարը պարտավոր է առանց լրացուցիչ որոշում կայացնելու անհապաղ ազատ արձակել մեղադրյալին:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ պետք է ՀՀ Ազգային ժողովն ապահովի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի իրավակարգավորումների համարժեքությունը ՀՀ Սահմանադրության 4, 6, 78 և 79-րդ հոդվածների պահանջներին: Խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի ուժով քրեական վարույթ իրականացնող մարմինները՝ քննիչը, դատախազն ըստ էության լիազորված են «անհրաժեշտությունից» ելնելով քրեական գործով մինչդատական վարույթում փոփոխել կամ վերացնել գրավի ձևով դատարանի որոշմամբ ընտրված խափանման միջոցը, որն ըստ էության հանգեցնում է դատական ակտի վերանայմանը:

Սահմանադրական դատարանի՝ 21.11.2017 թվականի ՍԴՈ-1387 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել,

ը/ «Վարտգեզ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 08.12.2017թ. ՍԴՈ-1394 որոշմամբ որոշել է.

«2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ հոդվածի՝ «պետք է հանձնվի» և «հանձնվում է» արտահայտությունները նշանակում են **ամբողջական ակտի՝ ցանկացած եղանակով /այդ թվում՝ էլեկտրոնային/ հասանելի դարձնելն օրենքով նախատեսված սուբյեկտներին՝ պայմանով, որ դատական ակտի պատճենը կողմին էլեկտրոնային եղանակով հասանելի դարձնելը չբացառի դատական ակտի թղթային տարբերակը կողմին տրամադրելը:**

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով երաշխավորում է **դատական ակտի բողոքարկման համար սահմանված ժամկետն ամբողջությամբ՝ առանց դատական ակտի պատճենը կողմին ցանկացած եղանակով /այդ թվում՝ էլեկտրոնային/ հասանելի դարձնելու համար սահմանված ժամկետի հաշվառման»:**

Խնդիրը կայանում է նրանում, որ, մի կողմից, պրակտիկայում, տարբեր հանգամանքներով պայմանավորված, ոչ միշտ էր, որ դատական ակտի պատճենը դատավարության մասնակցին հասանելի էր դառնում սահմանված ժամկետում, մյուս կողմից՝ քրեական դատավարության օրենսգիրքը դատական ակտի ուժի մեջ մտնելու

Ժամկետի հաշվարկի սկիզբ է համարում դատական ակտի հրապարակման օրը, երբորդ կողմից՝ դատարանները պարզ անալոզիայով կիրառում էին նույն հարցի վերաբերյալ ՄԴՈ-1062 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները (ՄԴՈ-1062 որոշման մեջ, հաշվի առնելով դատական ակտի պատճենը կողմին տրամադրելու համեմատաբար փոքր՝ եռօրյա ժամկետը, Սահմանադրական դատարանը գտել է, որ՝ «...անձն առնվազն 27 օր ժամանակ պետք է ունենա հիմնավոր բողոք ներկայացնելու համար»: Իսկ տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածը սահմանում է դատական ակտի պատճենը կողմին տրամադրելու **հնգօրյա ժամկետ, ինչը ՀՀ վերաքննիչ դատարանը կիրառում էր պարզ անալոզիայով**, և գտնելով, որ տվյալ դեպքում անձը 25 օր ժամանակ ունի հիմնավոր բողոք ներկայացնելու համար, առանց քննության էր թողնում վերաքննիչ բողոքն այն դեպքում, երբ անձը բողոք բերելու համար սահմանված **մեկամսյա ժամկետը** հաշվարկում էր դատական ակտն **իրեն հասանելի դառնալու պահից**):

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ Վերաքննիչ դատարանը պետք է՝ ա/ բողոք բերող անձից չպահանջի բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու մասին միջնորդություն, եթե դատական ակտը օրենքով սահմանված ժամկետում հասանելի չի դարձել կամ չի հանձնվել բողոք բերող անձին դատարանի թերացման արդյունքում, բ/ դատական ակտի պատճենը կողմին հասանելի դարձնի նաև էլեկտրոնային եղանակով՝ պայմանով, որ դատական ակտի պատճենը կողմին էլեկտրոնային եղանակով հասանելի դարձնելը չբացառի դատական ակտի թղթային տարբերակը կողմին տրամադրելը:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ ՀՀ Ազգային ժողովը պետք է՝ ա/ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի հետագա բարեփոխումների համար հիմք ընդունի այն սկզբունքը, որ բողոք բերողի համար երաշխավորվի դատական ակտի բողոքարկման համար օրենքով սահմանված ժամկետն ամբողջությամբ՝ առանց դատական ակտի պատճենը կողմին ցանկացած եղանակով /այդ թվում՝ էլեկտրոնային/ հասանելի դարձնելու համար սահմանված

Ժամկետի հաշվառման, բ/ օրենսդրորեն նախատեսի դատական ակտի պատճենը նաև էլեկտրոնային եղանակով կողմին հասանելի դարձնելու՝ դատարանի պարտականությունը, որպես պատշաճ ծանուցման եղանակ, պայմանով, որ դատական ակտի պատճենը կողմին էլեկտրոնային եղանակով հասանելի դարձնելը չբացառի դատական ակտի թղթային տարբերակը կողմին տրամադրելը:

Սահմանադրական դատարանի՝ 08.12.2017 թվականի ՄԴՈ-1394 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել,

թ/ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 19.12.2017թ. ՄԴՈ-1395 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման շրջանակներում:

Անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը երաշխավորելու անհրաժեշտությունից ելնելով՝ պետք է ապահովվի ընտրությունների արդյունքների ամփոփման համար հիմք հանդիսացող իրավական ակտերի և փաստաթղթերի /այդ թվում՝ գրանցամատյանների/ առնչությամբ ծագող ընտրական վեճերի **կոլեգիալ կարգով քննությունը**՝ օրենսդրորեն անհրաժեշտ ներդաշնակություն ապահովելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի և ՀՀ ընտրական օրենսգրքի 75-րդ հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորումների միջև»:

ՄԴՈ-1395 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ.

- սահմանադրականության տեսանկյունից իրավաչափ է այն հանգամանքը, որ ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով օրենսդիրը, ընտ-

րական գործընթացի ժամանակային սահմանափակումների առանձնահատկություններից ելնելով, վարչական դատարանին առաջադրել է արագ (սեղմ ժամկետներում), գործի հանգամանքների ամբողջական, բազմակողմ և արդյունավետ այնպիսի քննություն իրականացնելու իրավական խնդիր, որի արդյունքում գործով ըստ էության կայացված ակտն իրավաբանական ուժի տեսանկյունից անշրջելի՝ անբողոքարկելի լինելով հանդերձ, կերաշխավորի նաև անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը,

- անբողոքարկելի դատական ակտի առկայության պայմաններում որպես անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիք օրենսդիրը դիտարկել է առանձին գործերի քննության և լուծման համար **վարչական դատարանի կոլեգիալ կազմ** (մասնավորապես՝ 5 դատավորի կազմով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 196, 208-րդ հոդվածներ, 3 դատավորի կազմով՝ 203-րդ հոդված),

- ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածում 5 դատավորի կազմով քննության են ենթակա հատկապես այն գործերը, որոնք առնչվում են ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ընդունված վերջնական որոշումներին /որոնք Սահմանադրական դատարանում բողոքարկելի չեն/, այլև ողջ ընտրական համակարգին առնչվող այնպիսի իրավունքների պաշտպանությանը, որոնք առանձնահատուկ կարևորություն ունեն ընտրական գործընթացի անխափան իրականացման և ընտրությունների վերջնական արդյունքների ամփոփման տեսանկյունից: Դրանց թվին են դասվում, մասնավորապես, թեկնածուներին գրանցելու, չգրանցելու, գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ վարչական ակտերի իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:

Նկատի ունենալով ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության բարձրացման անհրաժեշտությունը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հան-

րապետությունում վարչական դատարանին կարևորագույն դերակատարություն է վերապահված ընտրական իրավունքի դատական պաշտպանության հարցում, Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ վերոնշյալ օրենսդրական կարգավորումները դեռևս անհրաժեշտ ներդաշնակություն չեն երաշխավորել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, նույն հոդվածի 2-րդ մասի և ՀՀ ընտրական օրենսգրքի 75-րդ հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորումների առումով:

Անբողոքարկելի դատական ակտի առկայության պայմաններում մարդու դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման երաշխիքների համատեքստում կարևորելով առանձին ընտրական գործերի կոլեգիալ քննության և լուծման կարգի նախատեսումը՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարել նշել, որ վերջինս, ի թիվս այլնի, միտված է նվազեցնել ընտրական գործերի քննության ժամանակ հնարավոր սուբյեկտիվիզմի տարատեսակ դրսևորումները, նպաստել արդարադատության շահերի պաշտպանությանը և բացառել հնարավոր դատական սխալները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Ընտրական գործի ընդդատությունը և վարչական դատարանի կազմը» վերտառությամբ 208-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը գործերի քննության և լուծման կոլեգիալ կարգ սահմանել է ընտրական գործընթացի կազմակերպմանն ու իրականացմանն առնչվող մի շարք կարևոր հանգամանքների առումով: Մինչդեռ ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության պատշաճ մակարդակի, ընտրությունների օրինականության ապահովման, ընտրական իրավունքների պաշտպանության համար պակաս կարևոր չեն ընտրական գործընթացներին առնչվող նաև այլ գործեր, որոնք քննվում և լուծվում են միանձնյա կարգով:

ՀՀ ընտրական օրենսգրքի համակարգային վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ օրենսդիրը հատուկ կարևորել է ընտրություն-

ների անցկացման և ամփոփման փուլերում կայացված առանձին որոշումների և համապատասխան մարմինների գործողությունների արդյունքում ընդունված իրավական փաստաթղթերի նշանակությունն ընտրությունների արդյունքների ամփոփման գործընթացում: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովում Ազգային ժողովի, Երևանի ավագանու ընտրությունների արդյունքների ամփոփման կարգը» վերտառությամբ 75-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, դատարանի վճիռները, հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքով ընդունած որոշումները, **տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, ամփոփում է ընտրության արդյունքները և ընդունում որոշում ընտրությունների արդյունքների վերաբերյալ:**

ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս է անդրադարձել ընտրական գործընթացում գրանցամատյանների վարման կարևորությանը, ինչը, սակայն, դեռևս պատշաճ մակարդակով չի իրականացվում: Մահմանադրական դատարանն ամրագրել է, որ խնդրի լուծումը ոչ միայն իրավակիրառական պրակտիկայում առկա թերացումների հաղթահարմամբ է պայմանավորված, այլև առանձին օրենսդրական լուծումների վերանայում է պահանջում: **Վերջինս հատկապես վերաբերում է ընտրական վեճերով անբողոքարկելի դատական ակտի առկայության պայմաններում մարդու դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման երաշխիք հանդիսացող գործերի կոլեգիալ քննության կարգի օրենսդրական ամրագրման բացակայությանը՝ այն դեպքերում, երբ դատարանի կողմից քննվում են ընտրական իրավունքի պաշտպանության և ընտրությունների արդյունքների ամփոփման ոլորտին վերաբերող առանցքային հարցեր:**

Մահմանադրական դատարանը գտել է, որ ընտրությունների արդյունքների ամփոփման համար հիմք հանդիսացող իրավական փաստաթղթերի և/կամ ակտերի, այդ թվում՝ նաև տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում խախտումներն արձանագրելու վերաբերյալ ծագած ընտրական վեճերի քննության և լուծման ժամանակ օրենսդրի կողմից պետք է երաշխավորվեն անբողոքարկելի դատական ակտի առկայության պայմաններում անձի դատական պաշտպանության արդյունավետ իրացման երաշխիքները, մասնավորապես՝ գործերի կոլեգիալ քննության կարգի ամրագրումը:

Մահմանադրական դատարանի՝ 19.12.2017 թվականի ՄԴՈ-1395 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:

**Կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) և
պատգամավորության թեկնածուների դիմումների հիման վրա ընդունված ՄԴ
որոշումները և դրանց կատարումը**

2017 թվականի ընթացքում կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) և պատգամավորության թեկնածուների կողմից ներկայացվել է 1 դիմում:

«Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինքի դիմումի հիման վրա՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 9-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 163-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ՝ գործով ՀՀ Մահմանադրական դատարանն իր՝ 28.04.2017թ. ՄԴՈ-1364 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 9-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտ-

րությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 163-Ս որոշումը թողնել ուժի մեջ»:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումներից և ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 6-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված պահանջից հետևում է, որ.

ա/ ընտրական գործընթացին մասնակից իրավասուբյեկտները պարտավոր են օրենքով սահմանված ժամկետներում և կարգով իրականացնել ընտրական իրավունքի պաշտպանությանն ուղղված միջոցներն այն դատարանում, որն ունի համապատասխան իրավագործություն,

բ/ հաշվի առնեն, որ ընտրական իրավունքի դատական պաշտպանության հարցերով ՀՀ սահմանադրական դատարանը ոչ թե այլ դատարանների նկատմամբ վերադաս դատարան է, այլ իրականացնում է ՀՀ Սահմանադրությամբ իրեն վերապահված կոնկրետ լիազորություն և Սահմանադրական դատարանի վրա նույնպես տարածվում է ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը: ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով Սահմանադրական դատարանն իրավասու չէ քննության առարկա դարձնել բոլոր այն հարցերը (դիմումները), որոնք նախապես քննության պետք է առնվեն և իրավական լուծում ստանան վարչական (արտադատական) կարգով կամ ՀՀ վարչական դատարանում, որի որոշումներն այդ հարցերում վերջնական են,

գ/ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը չեն կարող դիտարկվել որպես իրավական նորմի սահմանադրականության վերաբերյալ վեճեր, քանի որ վերջիններիս լուծման համար սահմանադրաիրավական այլ պահանջներ ու ընթացակարգեր են նախատեսված:

Սահմանադրական դատարանը փաստել է, որ դիմողը քննության առարկա վեճի հիմքում իրավափաստական հանգամանքների փոխարեն ներկայացրել է հիմնականում տեղական առանձին դիտորդական նախաձեռնության դիտարկումների արդյունքները: Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ Հայաստանի

Հանրապետության հանրային իշխանությունների առաջնահերթ խնդիրն է հաղթահարել այն մտահոգությունները, որոնք հայտնեցին միջազգային և տեղական դիտորդական առաքելությունները, մասնավորապես՝ ընտրական գործընթացում քաղաքական կոռուպցիայի դրսևորումների առնչությամբ: Սահմանադրական դատարանը գտել է նաև, որ խնդրի արմատական լուծումը պահանջում է առավել ակտիվ ու հետևողական քայլերի իրականացում տնտեսական, վարչական և քաղաքական ներուժի սերտաճումը հաղթահարելու, «գործատու-վարձու աշխատող» փոխհարաբերություններն իրավունքի գերակայության սկզբունքի պահանջներին համապատասխան որակապես նոր աստիճանի բարձրացնելու և այդ փոխհարաբերություններում վարձու աշխատողին լիարժեք ու իրավական առումով հուսալիորեն պաշտպանված իրավասուբյեկտ դարձնելու, ընտրական գործընթացի բոլոր փուլերում քաղաքական ու գործարար շահերի միահյուսման հնարավորությունը հաղթահարելու ուղղությամբ:

Անկախ նրանից, որ քննության առարկա վեճի իրավական բնույթի առումով քաղաքացիական հասարակության դիտորդների դիտարկումներն ինքնին ապացուցողական նշանակություն չունեն /քանի դեռ չեն հաստատվել բողոքարկման՝ օրենքով նախատեսված ընթացակարգերի արդյունքում/, այդուհանդերձ, միայն նրանց ու լրատվամիջոցների օգնությամբ է հնարավոր եղել բացահայտել Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացում դեռևս առկա որոշակի բացերն ու խնդիրները:

Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև. ակնհայտ է, որ անբավարար են քաղաքական ուժերի, մասնավորապես՝ Սահմանադրական դատարան դիմած կուսակցությունների դաշինքի կողմից օրենքով իրենց վերապահված իրավական լծակների գործադրումը՝ իրենց ընտրական իրավունքի պաշտպանության հարցում: ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ գործող ընտրական օրենսգիրքն այս հարցում քաղաքական ուժերին առավել լայն հնարավորություններով է օժտել: Դրանց իրավաչափ գործադրումը ոչ միայն իրավունք, այլև պարտականություն է: Մինչդեռ ՀՀ

սահմանադրական դատարան սույն գործով դիմած կուսակցությունների դաշինքն ընտրական գործընթացներում ունեցել է կոնկրետ իրավասուբյեկտների քանակական լուրջ ընդգրկվածություն: 2009 ընտրական տեղամասերում դաշինքի մաս կազմող ՀԱԿ-ը տեղամասային ընտրական հանձնաժողովներում նշանակել է 1582 հանձնաժողովի անդամ, 305 հանձնաժողովի նախագահ կամ քարտուղար /ընդգրկելով ընտրական տեղամասերի շուրջ 94 տոկոսը/: Դաշինքն ունեցել է նաև թվով 1688 վստահված անձ: Ըստ գործի նյութերի՝ նրանք օրենքով նախատեսված կարգով ու ժամկետներում գրեթե որևէ իրավական գործընթաց չեն ձեռնարկել՝ իրենց իսկ դիմումում ներկայացվող բացասական դրսևորումների դեմ իրավական պայքար ծավալելու ուղղությամբ:

Այսուհանդերձ, փաստն այն է, որ, համաձայն գործի նյութերի, ՀՀ սահմանադրական դատարան դիմած կուսակցությունների դաշինքի անդամ ՀԱԿ-ի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովների շուրջ 94 տոկոսում նշանակված բոլոր անդամները, առանց բացառության, ստորագրել են քվեարկության արդյունքների վերաբերյալ բոլոր արձանագրությունները՝ ըստ էության վավերացնելով այդ ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների հավաստիությունը: Նրանք չեն ներկայացրել որևէ հատուկ կարծիք: Չեն վիճարկել որևէ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները: Ըստ գործի նյութերի՝ ընտրախախտումներ չեն արձանագրել նաև դաշինքի 1668 վստահված անձանցից 1667-ը: Դաշինքի կողմից դատական կարգով որևէ բողոք չի ներկայացվել:

Այս իրողությունն աննախադեպ է ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև, թերևս, համապետական ընտրությունների միջազգային պրակտիկայում: Սահմանադրական դատարանը գտել է, որ նման իրավիճակներում Սահմանադրական դատարանում իրավական վեճի նախաձեռնումը ոչ թե ընտրական իրավունքի պաշտպանության խնդիր է հետապնդում, այլ դառնում է ինքնանպատակ ու քաղաքական շահարկումների տեղիք է տալիս:

Մահմանադրական դատարանն ամրագրել է, որ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումը Մահմանադրական դատարանում վիճարկելու ժամանակ, երբ բացակայում են ընտրակեղծիքի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ու դատական անհրաժեշտ ընթացակարգերով հիմնավորված ապացույցներ ու առկա են տեղամասային ընտրական հանձնաժողովների՝ դիմողի /ՀԱԿ-ի/ նշանակված անդամների կողմից քվեարկության արդյունքների միակարծությամբ վավերացված արձանագրություններ, բացառապես դիտորդների կողմից առերևույթ խախտում բնութագրվող գրառումների հիման վրա հնարավոր չէ արձանագրել ընտրության արդյունքները վիճարկողի իրավունքների խախտման փաստը:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ընտրական գործընթացների իրավակարգավորման վերջին փոփոխությունները Հայաստանում կարևոր անդրադարձ ունեցան նաև ընտրական իրավունքի դատական պաշտպանության ոլորտում, ինչը, սակայն, դեռևս պատշաճ ձևով չի ընկալվել ու իրացվել ընտրական գործընթացին մասնակից իրավասուբյեկտների կողմից: Օրենքով նախատեսված հնարավորությունների արդյունավետ օգտագործման փոխարեն ընդհանուր բնույթի դատողություններով ու քաղաքական մեղադրանքների ոճով դատական գործընթաց նախաձեռնելն արդյունավետ ճանապարհը չէ քաղաքական ուժի ընտրական իրավունքի պաշտպանության հարցում:

Մահմանադրական դատարանը նաև գտել է, որ չնայած ՀՀ նոր ընտրական օրենսգիրքն ընդունվեց քաղաքական լայն փոփոխամաձայնության պայմաններում՝ գործնականում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ձայների 3/4-ից ավելիի մեծամասնությամբ, այսուհանդերձ, դրանում տեղ գտած առանձին լուծումներ լիարժեք չեն իրացնում իրավական որոշակիության սկզբունքի սահմանադրական պահանջը և լայն հայեցողության հնարավորություն են թողնում: Մասնավորապես, դա վերաբերում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու ինստիտուտի ոչ բավարար հստակությամբ իրավակարգավորմանը, Ազգային ժողովի ընտրված լինելու, պատգամավորներին մանդատների հանձնման և

առաջին նստաշրջանի գումարման ժամկետների հստակեցմանը, ինչը հայեցողական մեկնաբանությունների առարկա է դարձել, ինչպես նաև կուսակցությունների համապետական և տարածքային ընտրական ցուցակներով առաջադրված պատգամավորի թեկնածուներից ընտրության արդյունքներով պատգամավորական մանդատ ստանալու հարցում հնարավոր քաղաքական հայեցողության հետագա դրսևորումների բացառմանը: Հետագա բարելավման անհրաժեշտություն ունի նաև վարչական վարույթների իրականացման ու ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից բողոքներին սահմանված կարգով ու ժամկետներում ընթացք տալու համակարգը:

Սույն գործով դատաքննության շրջանակներում ընդհանրացնելով անդրադարձը դիմողի կողմից ներկայացված փաստարկներին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումին կից ներկայացված փաստարկները, գրեթե առանց բացառության, վերցված են զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներից և «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դիտարկումների արդյունքներից: Դատաքննության ընթացքում հավելյալ ներկայացվեցին նաև հասարակական այլ կազմակերպությունների դիտարկումներ: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ «Փաստերի վերաբերյալ կողմերի բացատրություններում ներկայացվող տեղեկությունները ապացուցողական նշանակություն չունեն»: Դրանք պետք է օրենքով նախատեսված իրավական գործընթացի արդյունքում ձեռք բերեն նման նշանակություն:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն, Սահմանադրական դատարանն ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկություններ է ստացել իրավասու պետական մարմիններից: Մասնավորապես, ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված նյութերը վկայում են, որ ս.թ. ապրիլի 21-ի դրությամբ ՀՀ դատարանների կողմից ՀՀ Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրություններին առնչվող թվով 3 քաղաքացիական և 10 վարչական գործերով դատական ակտեր են կայացվել: Դրան-

ցով դիմողները հիմնականում եղել են առանձին քաղաքացիներ կամ հասարակական կազմակերպություններ: Սույն գործով դիմող՝ «Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինքի կողմից դատական որևէ հայցադիմում չի ներկայացվել:

Ընդհանուր հետևությունն այն է, որ «Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինքի կողմից ՀՀ Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների գործընթացում օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում չեն արձանագրվել ու բողոքարկման առարկա դարձվել իրավախախտումների վերաբերյալ ապացուցողական նշանակություն ունեցող այնպիսի փաստեր, որոնք, ներկայացնելով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, հիմք կարող էին ծառայել ՀՀ ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի այլ կետով որոշում կայացնելու համար:

ՀՀ դատարանների դիմումների հիման վրա ընդունված ՄԴ որոշումները և դրանց կատարումը

Սահմանադրական դատարանը 2017 թվականի ընթացքում դատարանների դիմումների հիման վրա քննության է առել չորս գործ, որոնցից երկուսը՝ 2016 թվականի ընթացքում Սահմանադրական դատարան ներկայացված երկու դիմումների, իսկ մյուս երկուսը՝ 2017 թվականի ընթացքում ներկայացված երկու դիմումների հիման վրա: Մեկ դիմումի հիման վրա գործով դատաքննությունը նշանակված է 06.02.2018թ.:

2017 թվականի ընթացքում ՀՀ դատարանների դիմումների հիման վրա բոլոր չորս գործերով Սահմանադրական դատարանը վիճարկվող նորմերը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ գործերով կայացված որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում: Մասնավորապես.

1. «Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի, 66-րդ հոդվածի, 426.2-րդ և 426.3-րդ հոդվածների, 49-րդ գլխի նորմերի, ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի, 84-րդ հոդվածի, «Պատժից ազատելը» վերտառությամբ 12-րդ գլխի նորմերի, «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն)՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 14.02.2017թ. ՄԴՈ-1348 որոշմամբ որոշել է.

«4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2-րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցվածության մեջ գտնվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից՝ արարքի պատժելիությունը վերացնող օրենքն ուժի մեջ մտնելն իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում պետք է ընկալվի որպես նոր հանգամանք, և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով»:

Խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն արարքի հանցավորությունը և պատժելիությունը վերացնող օրենքը չի դիտարկել որպես նոր հանգամանք և որպես դատական ակտերի վերանայման հիմք: Այսինքն՝ բացակայում է արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու հատուկ քրեադատավարական կարգը, ինչի արդյունքում անձը շարունակում էր ենթարկվել քրեական հետապնդման կամ պատիժ կրել այնպիսի արարքի համար, որի հանցավորությունը և պատժելիությունը վերացվել է:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ ՀՀ Ազգային ժողովը պետք է լրացնի նշված իրավակարգավորման բացը:

Սահմանադրական դատարանի՝ 14.02.2017 թվականի ՍԴՈ-1348 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:

2. «ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 21.03.2017թ. ՍԴՈ-1358 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, մասնավորապես, հաշվի առնելով՝

ա) իրավակիրառ պրակտիկայում անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքի երաշխավորման անհրաժեշտությունը,

բ) օրենսգրքի նշված դրույթով նախատեսված բացառության իրացման անհրաժեշտությունը՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների անմիջական գործողության ապահովման ու իրավունքի գերակայության երաշխավորման հիման վրա,

գ) անձի մահվան հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում մահացածի հարազատներին նման որոշման ընդունման մասին իրազեկելու անհրաժեշտությունը»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում ամրագրված հիմքը /քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ

հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անձը մահացել է/ ոչ արդարացնող բնույթի է, որի դեպքում քրեական հետապնդումը դադարեցնելիս մեղադրյալի կողմից հանցանքի կատարումը, որպես կանոն, մինչդաստական կամ դատական վարույթներում համարվում է ապացուցված և առաջանում է մահացածի իրավունքների վերականգնման անհրաժեշտություն: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում որոշակիացված չէ, թե ով, ինչպես և որ փուլում պետք է գնահատի նման անհրաժեշտության առկայությունը: Բացի դրանից, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում այնպիսի ուղղակի կարգավորում, որի պայմաններում մահացածի մերձավոր ազգականների կամ այլ շահագրգիռ անձանց կողմից մահացածի նկատմամբ քրեական հետապնդման դադարեցման դեմ առարկելը խոչընդոտ կհանդիսանա այդպիսի որոշում կայացնելու համար:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ դատարանները մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումներ սահմանելը պետք է առաջնորդվեն այն մոտեցմամբ, որ անձի մահվան հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում անհրաժեշտ է այդ մասին իրազեկել նրա մերձավոր ազգականին, ապահովել վերջինի դիրքորոշման լսելիությունը, մահացածի իրավունքների վերականգնման անհրաժեշտության դեպքում քրեական գործի վարույթը շարունակելու՝ նրա պահանջի բավարարումը և մասնակցությունը մահացածի իրավունքների պաշտպանության և նրա մեղավորության հարցը պարզելուն ուղղված դատավարության ողջ ընթացքում:

Հարկ է նկատել, որ տվյալ գործով Սահմանադրական դատարանն ամրագրել է նաև օրենսդրի կողմից իրավակարգավորման բացը լրացնելու անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանի՝ 21.03.2017 թվականի ՄԴՈ-1358 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել,

3. «Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի, 262-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 30.05.2017թ. ՄԴՈ-1372 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը ներկայացվում է համապատասխան բողոքի հետ միասին:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս տուժողի կամ օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատավարության մյուս մասնակիցների՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքն իրացվում է մինչև գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը, այն է՝ նախաքննության ավարտին նախորդող ժամանակահատվածում:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի և 262-րդ հոդվածի 3-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց պարզաբանվում է գործի նյութերի հետ ծանոթանալու նրանց իրավունքը» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս տուժողին կամ օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատավարության մյուս մասնակիցներին՝ գործի

նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը պարզաբանելու պարտականությունը կատարվում է մինչև գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը, այն է՝ նախաքննության ավարտին նախորդող ժամանակահատվածում»:

Խնդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի առնչությամբ կարևորվում է նրանով, որ դիտարկվող հոդվածից պարզ չէ, թե վարույթն իրականացնող մարմնի որոշումները, գործողությունները և անգործությունը բողոքարկելիս որ բողոքը և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը պետք է ներկայացվեն միաժամանակ, թե սկզբում պետք է ներկայացվի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, և միայն այդ միջնորդությունները բավարարվելուց հետո՝ բողոքը:

Խնդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի առնչությամբ կարևորվում է նրանով, որ դիտարկվող հոդվածի ուժով գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննության ավարտման պարագայում գործի նյութերին տուժողը կարող էր ծանոթանալ *post factum*, մինչդեռ նման կարգի դեպքում տուժողը զրկվում էր օրենսգրքի 59-րդ հոդվածով նախատեսված մի շարք իրավունքներից, չէր կարողանում օրենքով նախատեսված ժամկետում ծանոթանալ գործի նյութերին և, ըստ այդմ, պատշաճ իրացնել իր իրավունքների պաշտպանության եզակի միջոց հանդիսացող՝ գործի վարույթը կարճելու մասին որոշման բողոքարկման իրավունքը: Դա արդյունք էր նրա, որ, մի կողմից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով մինչդատական վարույթում հետաքննության մարմնից, քննիչից պահանջված նյութերը, փաստաթղթերը, քրեական գործը հսկողության նպատակով դատախազին տրամադրելու վերաբերյալ վերջինիս պահանջի կատարումն իրականացվում է անհապաղ, մյուս կողմից՝ օրենսդիրը և՛ հսկող դատախազի, և՛ դատավարության մասնակիցների, այդ թվում տուժողի համար սահմանել է 7-օրյա ժամկետ գործի նյութերն ուսումնասիրելու համար, երրորդ կողմից՝ իրավակիրառական պրակտիկայում՝ հանրային սուբյեկտի (դատախազի) լիազորությունը և

մասնավոր սուբյեկտի (դատավարության մասնակցի) իրավունքն ամրագրող քրեադատավարական նորմերի միջև մրցակցության պայմաններում՝ տուժողի և դատավարության մյուս մասնակիցների իրավունքների պաշտպանությանը նախապատվություն տալու փոխարեն, լուծման առաջնահերթությունը վերապահվել էր հսկող դատախազի համապատասխան լիազորության իրականացմանը:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանը կիրառելի է համարել տուժողի կողմից նախաքննության ավարտին գործի նյութերին ծանոթանալու վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1008 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները, և, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիտարկվող օրենսգիրքը չի սահմանում բաց թողնված ժամկետը վերականգնելու իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, **ամրագրել է, որ իրավակիրառողը պետք է դիտարկվող օրենսգրքի 174-րդ հոդվածով սահմանված՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու իրավունքն իրացնի նույն օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի սահմանադրաիրավական բովանդակության տրամաբանությամբ ու նշանակությամբ, որն արդեն իսկ բացահայտված է խնդրո առարկա որոշման մեջ:**

Հարկ է նկատել, որ տվյալ գործով Սահմանադրական դատարանն ամրագրել է նաև օրենսդրի կողմից իրավակարգավորման բացը լրացնելու անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանի՝ 30.05.2017 թվականի ՄԴՈ-1372 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել,

4. «Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխի 451, 453, 455, 457, 458 և 459-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 24.10.2017թ. ՄԴՈ-1382

որոշմամբ որոշել է. «1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխի 451, 453, 455, 457, 458 և 459-րդ հոդվածները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ դիտարկվող օրենսգիրքն անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի կարգը հստակ սահմանում է մինչդատական վարույթի համար, իսկ դատական քննության փուլի համար՝ ոչ լիարժեք: Արդյունքում, պարզ չէր, թե անձի անմեղսունակությունը գործի դատական քննության փուլում պարզվելու դեպքում դատարանն ունի բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու հնարավորություն, թե՛ ոչ:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ դատարանները պետք է մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից դատական քննության փուլում անմեղսունակ ճանաչված անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման դատավարական առանձնահատկությունների հստակ կանոնակարգումն առաջնորդվեն հետևյալ մոտեցմամբ.

- երբ դատական քննության փուլում ի հայտ են գալիս բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հիմքեր, ապա դատարանը՝ կողմերի կարծիքը լսելուց հետո, սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կարող է որոշում կայացնել քրեական վարույթը բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի փոխակերպելու մասին,

- դատական քննության փուլում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի ուժով անձի մեղսունակության հարցը պարզելուց հետո դատարանն արդեն իսկ նույն օրենսգրքի 457-րդ հոդվածի ուժով կիրառում է անվտանգության միջոցներ,

- դատական քննության փուլում անմեղսունակ ճանաչված անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելիս որոշում կայացնել. ա/ անձի

կողմից քրեորեն պատժելի արարքն անմեղսունակության վիճակում կատարելն ապացուցված համարելով՝ նրան քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու մասին, ք/ նրա նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մասին:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն ամրագրել է ՀՀ Ազգային ժողովի կողմից իրավակարգավորման բացը լրացնելու անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանի՝ 24.10.2017 թվականի ՄԴՈ-1382 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:

ՀՀ գլխավոր դատախազի դիմումների հիման վրա ընդունված ՄԴ որոշումները և դրանց կատարումը

Սահմանադրական դատարանը 2017 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի դիմումների հիման վրա քննության է առել երեք գործ, որոնցից մեկը՝ 2016 թվականի ընթացքում Սահմանադրական դատարան ներկայացված մեկ դիմումի, իսկ մյուս երկուսը՝ 2017 թվականի ընթացքում ներկայացված երկու դիմումների հիման վրա: Մեկ գործով օրենքի վիճարկվող դրույթները **ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:** Այն է՝ «ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 2-րդ կետի, 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 28.03.2017թ. ՄԴՈ-1359 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 2-րդ կետի և 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում **«եզրափակիչ մասում»**

բառակապակցությունները ճանաչել ՀՀ Սահմանադրության /2015թ. փոփոխություններով/ 1-ին, 3, 4, 61, 63, 75, 79 և 80-րդ հոդվածների և ՀՀ Սահմանադրության /2005թ. փոփոխություններով/ 93-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր, քանի որ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված բովանդակության շրջանակներում նման ձևակերպման առկայությունը նոր հանգամանքի հետ չկապված վճռաբեկ բողոք բերելիս վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձին հնարավորություն չի տալիս իր դիրքորոշումը հիմնավորելու համար վկայակոչել Սահմանադրական դատարանի որոշման այլ մասերում (բացի եզրափակիչ մասից) արտահայտված՝ իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումները, ինչը հաշվի պետք է առնվի բողոքը քննելիս:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ» դրույթում «եզրափակիչ մասում» բառակապակցությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության /2005թ. փոփոխություններով/ 93-րդ և 103-րդ հոդվածներին հակասող և անվավեր այնքանով, որքանով դրա առկայության պայմաններում ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալների կողմից օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքի հիմքով բերված վճռաբեկ բողոքի շրջանակներում Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում ամրագրված՝ իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումները դատական պրակտիկայում հիմք չեն ընդունվում բողոքի ընդունելության և քննության շրջանակներում»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ Սահմանադրական դատարանի որոշումը կատարելիս իրավակիրառական պրակտիկան հաշվի էր առնում այդ որոշման միայն եզրափակիչ մասում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ անտեսելով որոշման պատճառաբանական մասում ամրագրվածները: Խնդիրն առավել ցայտուն է

դառնում, երբ այն վերաբերում է նոր հանգամանքի հետ չկապված վճռաբեկ բողոք բերելուն, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալների կողմից օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքի հիմքով վճռաբեկ բողոք բերելուն: Փաստորեն, նոր հանգամանքի հետ չկապված վճռաբեկ բողոք բերելիս վճռաբեկ բողոքը վարույթ չէր ընդունվում, իսկ նոր հանգամանքի հիմքով վճռաբեկ բողոք բերելիս դատական ակտը նոր հանգամանքի հիմքով չէր վերանայվում, եթե բողոք բերող անձը վկայակոչում էր Սահմանադրական դատարանի որևէ որոշման միայն պատճառաբանական մասում ամրագրված իրավական դիրքորոշումները:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանը վկայակոչել է իր ՍԴՈ-943 որոշման մեջ ամրագրված այն իրավական դիրքորոշումները, համաձայն որոնց՝ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները. ա/ անմիջականորեն բխում են սահմանադրական դատարանի լիազորություններից, հետևաբար՝ կրում են պաշտոնական բնույթ, բ/ ունեն կոնկրետ իրավական հետևանք, հասցեագրված են ինչպես տվյալ գործով կոնկրետ, այնպես էլ հանրային-իրավական հարաբերությունների բոլոր սուբյեկտներին (համընդգրկուն են), գ/ ունեն գործողության անսահմանափակ ժամկետ, կարող են փոփոխվել միայն սահմանադրական դատարանի որոշումներով, դ/ կոչված են ՀՀ իրավահամակարգում և իրավակիրառական պրակտիկայում նպաստելու իրավական անորոշության վերացմանը, դրվում են իրավահարաբերությունների սահմանադրականացման հիմքում, ունեն նախադեպային բնույթ, ե/ մինչև վեճի առարկա հարաբերության նորմատիվ կարգավորումը, որոշ դեպքերում նաև իրավակարգավորման ժամանակավոր միջոց են, գ/ ՀՀ Սահմանադրության նորմերի պաշտոնական մեկնաբանություններ են: Ըստ այդմ էլ տվյալ գործով Սահմանադրական դատարանը գտել է, որ Սահմանադրական դատարանի՝ իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշման իրավական հետևանքը պայմանավորված չէ տվյալ իրավական դիրքորոշման՝ Սահմանադրական դատարանի որոշման այս կամ այն մասում ամրագրված լինելու փաստով:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն ամրագրել է ՀՀ Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարումը երաշխավորելու համար օրենսդրորեն հստակ ապահովելու անհրաժեշտությունը, որպեսզի հանրային իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորեն դրանց ամբողջության մեջ, հաշվի առնելով ոչ միայն որոշման եզրափակիչ մասը, այլև պատճառաբանական մասում շարադրված իրավական դիրքորոշումները, որոնք սահմանադրական իրավունքի աղբյուր են և իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն:

Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները կարող են իրենց արտացոլումը գտնել ՀՀ Ազգային ժողովի օրակարգում ներառված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում:

ՀՀ գլխավոր դատախազի դիմումների հիման վրա մյուս երկու գործերով օրենքի վիճարկվող դրույթները ճանաչվել են Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ տվյալ որոշմամբ արձանագրելով իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են մարդկանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը, կամ տարբեր իրավական հարցերի վերաբերյալ արտահայտելով համապատասխան դիրքորոշումներ: Դրանք են.

ա/ «ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 13.06.2017թ. ՍԴՈ-1373 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում»:

Խնդիրն այն է, որ գործող իրավակարգավորումներում առկա է օրենքի բաց, որը դրսևորվում է նրանում, որ՝ ա/ օրենքը չի պարտավորեցնում քննիչին մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին դատարան միջնորդություն ներկայացնելուց առաջ տեղեկացնել դատախազին, բ/ օրենքը չի պարտավորեցնում դատավորին քննիչի միջնորդությամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին դատարանի որոշումը քննիչից բացի տրամադրել նաև դատախազին: Նման պայմաններում, երբ դատախազը ժամանակին ու պատշաճ ձևով իրազեկված չի լինում քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին քննիչի կողմից դատարան միջնորդություն ներկայացնելու կամ դատարանի կողմից ընդունված որոշման մասին, ապա՝ ա/ հնարավոր չի դառնում արդյունավետ իրացնել օրենսգրքի 283-րդ հոդվածի 2-րդ մասի և 287-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերով դատախազին վերապահված իրավասությունը, բ/ վտանգվում է և՛ անձի շահերի պաշտպանության իրավունքը, և՛ դատախազական հսկողության արդյունավետ իրականացման սահմանադրաիրավական պահանջը:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ քննիչը պետք է մինչև օրենսդրական համարժեք փոփոխությունները դատարան ներկայացնելուց առաջ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդության մասին իրազեկի հսկող դատախազին: Միաժամանակ, Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ դատարանները պետք է մինչև օրենսդրական համարժեք փոփոխությունները կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը

երկարացնելու վերաբերյալ դատարանի որոշման մասին պատշաճ ձևով իրազեկեն նաև դատախազին:

Սահմանադրական դատարանն ամրագրել է նաև, որ ՀՀ Ազգային ժողովը համապատասխան իրավակարգավորումներում պետք է կատարի այնպիսի հստակեցումներ, որոնք իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի պահանջներից և սույն գործով Սահմանադրական դատարան իր իսկ կողմից ներկայացված բացատրություններից ելնելով՝ ա/ կապահովեն մինչդասական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության լիարժեք իրականացումը, բ/ կերաշխավորեն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ դատարանի որոշումը դատախազի կողմից բողոքարկելու լիազորության պատշաճ իրացումը:

բ/ «ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 05.12.2017թ. ՄԴՈ-1393 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի՝ «մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին» արտահայտությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝

ա/ «մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին» արտահայտությունը չի կարող մեկնաբանվել ավելի լայն, քան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270 և 271-րդ հոդվածներում նախատեսված պահանջներն են: Իսկ վերջիններս չեն կարող մեկնաբանվել այնպես, որ այդ մեկնաբանությունը ներառի ապացույցների գնահատումը կամ հնարավորություն տրվի դատարանին դրսևորելու այնպիսի վարքագիծ, որը դատարանը դատավարության տվյալ փուլում իրավասու չէ դրսևորել,

բ/ գործը մեղադրողին մեկից ավելի անգամ վերադարձնելը չի բխում իրավունքի գերակայության սկզբունքից և անձի սահմանադրական իրավունքների խախտման իրական վտանգ կարող է ստեղծել:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դատարանը գործը վերադարձրել է դատախազին, վերջինս մեղադրական եզրակացությունում առկա թերություններն օրենքի պահանջներին համապատասխան շտկելու նպատակով այն կարող է ուղարկել քննիչին՝ պահպանելով դատարանի կողմից սահմանված ժամկետները»:

Խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի՝ «մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին» արտահայտությանն իրավակիրառական պրակտիկայում տրվել էր այնպիսի բովանդակություն, որը դատարանին հնարավորություն էր ընձեռում գնահատել քրեական գործով ձեռք բերված ապացույցները (իրավակիրառական պրակտիկայում մեղադրական եզրակացությունը վերադարձվում էր նաև այնպիսի պահանջներին անհամապատասխանության հիմքով, որոնք առնչվում են բացառապես ապացույցներ հետազոտելուց հետո դատական գնահատման ենթակա հանգամանքներին): Բացի դրանից, օրենսդրությունը, սահմանելով մեղադրական եզրակացությունը վերակազմելու համար քրեական գործը մեղադրողին վերադարձնելու դատավարական հնարավորություն, անհրաժեշտ հստակությամբ չի կարգավորել դրա դատավարական հետևանքները, մասնավորապես, դատարանի կողմից արձանագրված թերությունները մեղադրողի կողմից վերացնելու մեխանիզմը: Այսինքն՝ դատախազ-քննիչ հարաբերություններն այս մասով իրավական կարգավորումից դուրս են մնացել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ուսումնասիրության արդյունքում Մահմանադրական դատարանն արձանագրել է, որ մեղադրական եզրակացությանը ներկայացվող պահանջները սահմանված են օրենսգրքի 270 և 271-րդ հոդվածներում: Մահմանադրական դատարանը գտել է, որ`

նախ, «մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին» արտահայտությունը **չի կարող մեկնաբանվել ավելի լայն, քան օրենսգրքի 270 և 271-րդ հոդվածներում նախատեսված հստակ պահանջներն են:**

Երկրորդ` օրենսգրքի 270 և 271-րդ հոդվածներում նախատեսված պահանջները, իրենց հերթին, չեն կարող մեկնաբանվել այնքան լայն, որ այդ մեկնաբանությունը ներառի ապացույցների գնահատումը կամ հնարավորություն տրվի դատարանին դրսևորելու այնպիսի վարքագիծ, որը դատարանը դատավարության տվյալ փուլում իրավասու չէ դրսևորել: Այսինքն, քրեական գործը վերադարձնելը պետք է ծառայի իր բուն նպատակին` **ապահովելու դատավարական մի փուլից մյուսին սահուն և օրինաչափ անցումը, նպաստելու դատական քննության առավել արդյունավետ իրականացմանը:** Հիշյալ խնդրին անդրադարձ է կատարել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը` փաստելով, որ` «... դատարանի կողմից նման որոշման կայացումն արդարացված կլինի միայն մեկ դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը կազմված է քրեադատավարական օրենքի պահանջների խախտումներով, օրինակ` դատախազը չի հաստատել մեղադրական եզրակացությունը, այն ստորագրված չէ քննիչի կողմից, չունի նկարագրական-պատճառաբանական մաս, օրենքով սահմանված անհրաժեշտ հավելվածներ և այլն» (2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 քրեական գործով որոշում):

Երրորդ` հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում առկա իրավիճակը` Մահմանադրական դատարանը գտնում է, որ դատարանի կողմից գործը մեղադրողին մեկից ավելի անգամ վերադարձնելը վտանգում է ոչ միայն ողջամիտ ժամկետներում գործի քննության սկզբունքի իրացումը, այլև կարող է պարունակել գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու տարրեր /հակասելով ՀՀ սահմանադրական

դատարանի 2007թ. հուլիսի 24-ի ՄԴՈ-710 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին/, վտանգել դատարանի անաչառությունը, անհամատեղելի լինել իրավունքի գերակայության սկզբունքին:

Դատական պրակտիկայում վերոշարադրյալ եռատարր իրավական դիրքորոշումների պահպանման պարագայում խնդրին ամբողջական լուծում կտրվի և դատարանների ու դատախազի հայեցողության շրջանակներով պայմանավորված չի հանգեցնի փակուղային վիճակների:

Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ դատարանի կարծիքով իր պահանջների ոչ լիարժեք կատարումը հիմք չէ գործը կրկին մեղադրողին վերադարձնելը: Դատարանը պարտավոր է գործն ընդունել քննության և դատաքննությունն սկսել օրենքով նախատեսված ժամկետներում: Իր հերթին, մեղադրող կողմը պետք է նկատի ունենա, որ թերություններով ու ոչ հիմնավոր մեղադրական եզրակացությունը կարող է հանգեցնել գործի վարույթի կարճման և քրեական հետապնդումը դադարեցնելու որոշման կամ արդարացման դատավճռի կայացմանը:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի՝ «մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին» արտահայտությունը վերոնշյալ իրավական դիրքորոշումներին ոչ համահունչ կիրառելու դեպքում դատարանը դուրս կգա դատավարությունում անկողմնակալ իր դերի շրջանակներից: Այս պարագայում դատարանը նաև կողմերի միջև հավասարության նժարը կարող է խախտել ի շահ մեղադրանքի կողմի՝ դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը և 66-րդ հոդվածում ամրագրված՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ դատախազը պետք է մեղադրական եզրակացությունում առկա թերություններն ուղղելու

նպատակով գործը դատարանի կողմից վերադարձվելու դեպքում այն ուղարկի քննիչին, և համապատասխան ժամկետների հաշվարկի սկիզբ համարի գործը մեղադրողին վերադարձնելու մասին դատարանի որոշումը դատախազի կողմից ստանալու պահը:

Սահմանադրական դատարանն ամրագրել է նաև, որ ՀՀ Ազգային ժողովը պետք է օրենսդրական հստակ և ամբողջական կանոնակարգումներ սահմանի գործը մեղադրողին վերադարձնելուց հետո մեղադրական եզրակացությունում առկա թերությունները շտկելու համար դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը քննիչին ուղարկվելու, քննիչի կողմից դրանք վերացվելու առնչությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա ընդունված ՄԴ որոշումները և դրանց կատարումը

Սահմանադրական դատարանը 2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա քննության է առել երկու գործ, երկուսն էլ 2016 թվականի ընթացքում Սահմանադրական դատարան ներկայացված դիմումների հիման վրա: 2017 թվականի ընթացքում Սահմանադրական դատարան ներկայացված բոլոր չորս դիմումների հիման վրա գործերով դատաքննությունները նշանակված են 2018 թվականի հունվար-մարտ ամիսներին:

2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի երկու դիմումների հիման վրա գործերից մեկով օրենքի վիճարկվող դրույթը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը **հակասող և անվավեր:**

Մասնավորապես. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 258-րդ, 260-րդ, 262-րդ, 266-րդ և 267-րդ հոդվածների, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 24.01.2017թ. ՄԴՈ-1339 որոշմամբ որոշել է. «5. «Ոստիկանության մասին» ՀՀ

օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասը՝ այն մասով, որով չեն ապահովվում ազատությունից փաստացի զրկված անձանց համար այդ իսկ պահից իրավունքների պաշտպանության՝ սահմանադրորեն նախատեսված շրջանակներում, անհրաժեշտ իրավական երաշխիքներ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջներին հակասող և անվավեր»:

Խնդիրը կայանում է նրանում, որ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով ոստիկանությունը պարտավոր է անձնական ազատությունից զրկված անձի գտնվելու վայրի մասին այդ անձի ընտրած անձին տեղյակ պահել ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում, այլ ոչ թե անհապաղ, այնպես, ինչպես ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ: Իսկ ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մեկ այլ իրավունքին՝ ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվելու իրավունքին, ապա դիտարկվող նորմում այն իր իրացումը չի գտել:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ իրավակիրառողը պետք է կատարի ազատությունից զրկվելու պատճառների մասին տվյալ անձին «անհապաղ տեղեկացնելու» իր պարտականությունը և չցուցաբերի հայեցողական մոտեցում, իսկ մինչև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունումը հնարավորինս առաջնորդվի ՀՀ Սահմանադրության 3-րդ և 27-րդ հոդվածների այն դրույթների պահանջներով, որոնց համաձայն՝ «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» և «Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկվելու պատճառների ...մասին», «Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը: Այս իրավունքի իրականացումը

կարող է հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով»:

Սահմանադրական դատարանը, վերահաստատելով ՄԴՈ-1059 որոշման 6-րդ կետի այն պահանջը, որ երկրում սահմանադրական օրինականության հաստատման տեսանկյունից անհետաձգելի անհրաժեշտություն է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունումը, ամրագրել է ՀՀ Ազգային ժողովի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգիրք ընդունելու անհրաժեշտությունը:

Վերը նշված նույն, ինչպես նաև մյուս գործով օրենքի վիճարկվող նորմերը ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ գործերով կայացված որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում: Մասնավորապես.

ա/ վերը նշված նույն գործով կայացված որոշմամբ Սահմանադրական դատարանը որոշել է.

«2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ և 262-րդ հոդվածների մյուս դրույթները, ինչպես նաև 258-րդ և 267-րդ հոդվածները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ «խախտողի բերում», «վարչական ձերբակալում», «բերման ենթարկում» միջոցառումների դեպքում անձնական ազատությունից **փաստացի զրկելու պահից սկսած** ազատությունից զրկված անձի համար ապահովվում են ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները՝ որպես անմիջականորեն գործող իրավունքներ:

3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 266-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ այդ հոդվածով դատարանին չվկայակոչելը չի

կարող մեկնաբանվել և կիրառվել այնպես, որ խոչընդոտի վարչական ձերբակալման իրավաչափությունը դատարանում վիճարկելու՝ անձի իրավունքի իրացմանը:

4. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկում միշտ պետք է ներառված լինեն առնվազն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները»:

Խնդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 258, 260, 262 և 267-րդ հոդվածների մասով կայանում է նրանում, որ նշված հոդվածներն ազատությունից զրկված անձանց համար կամ չեն ապահովել ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները, կամ ապահովել են այդ իրավունքների մի մասը, կամ չեն նախատեսել ժամկետ այդ իրավունքների իրացման համար, կամ նախատեսվել է այլ ժամկետ, քան ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված ժամկետն է, այսինքն՝ իրավունքների իրացման համար չի նախատեսվել **փաստացի զրկելու պահից սկսած** ժամկետ:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանը, գտնելով, որ «խախտողի բերում», «վարչական ձերբակալում», «բերման ենթարկում» միջոցառումներն անձին ազատությունից զրկող միջոցառումներ են, ամրագրել է, որ իրավակիրառողը պետք է դրանցից յուրաքանչյուրի ազդեցությունն անմիջականորեն կրող սուբյեկտների վրա անձնական ազատությունից փաստացի զրկելու պահից տարածի ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով սահմանված երաշխիքները՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ եղանակով է այն տեղի ունենում՝ «խախտողի բերման», «վարչական ձերբակալման» թե «բերման ենթարկելու» միջոցով:

Խնդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 266-րդ հոդվածի մասով կայանում է նրանում, որ դիտարկվող նորմը նախատեսում էր վարչական ձերբակալումը, անձնական զննությունը, իրերի զննությունը և իրերն ու փաստաթղթերը վերցնելը վերադաս մարմնին (պաշտոնատար անձին) կամ դատախազին

բողոքարկելու իրավունք, ինչը կարող էր իրավակիրառական պրակտիկայում ստուգել կարծիք, որ անձը չի կարող դատական կարգով վիճարկել վարչական ձերբակալման իրավաչափությունը:

Խնդիրը «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի առնչությամբ կայանում է նրանում, որ դիտարկվող նորմը նախատեսում է մարդու խնդրանքով իր իրավունքների ու պարտականությունների ծանուցումը կատարել գրավոր՝ հիմք ընդունելով ոչ թե օրենքը, այլ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու վերաբերյալ **ՀՀ կառավարության որոշումը:**

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն արձանագրելով, որ ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի N 818-Ն որոշմամբ հաստատված ցանկն ընդգրկում է ազատությունից զրկված անձի համար ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված բոլոր իրավունքները, ամրագրել է, որ ՀՀ կառավարությունը չպետք է տվյալ որոշման մեջ հետագայում կատարի այնպիսի փոփոխություններ, որոնք կբացառեն ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում, մասնավորապես, վարչական կարգով ազատությունից զրկվող անձանց համար նախատեսված բոլոր իրավունքները, ներառյալ՝ իրավաբանական օգնություն ստանալու և բժշկական զննության ենթարկվելու իրավունքը,

բ/ «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության 19-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապա-

տասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 04.04.2017թ. ՄԴՈ-1360 որոշմամբ որոշել է.

«1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է հետաքննության կամ նախաքննության մարմինը» և «Կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես» դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ հետաքննության կամ նախաքննության մարմինը կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես կարող է վերցնել բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց (ստորագրություն չհեռանալու մասին կամ կալանք) կիրառելու մասին որոշման առկայության պայմաններում:

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի՝ «Վկան պարտավոր է՝ ... չմեկնել այլ վայր՝ առանց դատարանի թույլտվության» դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ վկային այլ վայր մեկնելու թույլտվություն տալու՝ դատարանի լիազորությունը պետք է իրականացվի ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված նպատակի շրջանակներում և ՀՀ Սահմանադրության 78 ու 79-րդ հոդվածներով սահմանված համաչափության և որոշակիության սկզբունքների պահպանմամբ, որով և կանխորոշվում են դատարանի հայեցողության սահմանները:

3. «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի

Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության 19-րդ կետի 1-ին պարբերության՝ «Կասկածյալների, մեղադրյալների, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն՝ չհեռանալու մասին, անձնագրերը ժամանակավորապես վերցնում են հետաքննության կամ նախաքննության մարմինները կամ դատարանը», 2-րդ պարբերության՝ «Կասկածյալների և մեղադրյալների անձնագրերը տերերին են վերադարձվում խափանման միջոցի վերացման դեպքում» դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

4. «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության 19-րդ կետի 3-րդ պարբերությունը (ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 823-Ն որոշման խմբագրությամբ) համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից անձնագրի փոխարեն անձը հաստատող փաստաթուղթ պետք է տրվի կալանքի տակ չգտնվող այն կասկածյալներին և մեղադրյալներին, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն՝ չհեռանալու մասին:

5. «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ բացահայտված սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ «խափանման միջոցի կիրառման մասին տեղեկությունները՝ կիրառման պահին» ՄԷԿՏ համակարգում տեղադրելու պարտականությունը պետք է

համահունչ լինի «խափանման միջոցի վերացման մասին տեղեկությունները՝ խափանման միջոցի վերացման պահին» ՄԷԿՏ համակարգ ուղարկելու պարտականության հետ»:

Խնդիրը կայանում է նրանում, որ վկայի տեղաշարժման ազատությունը, ինչպես նաև խափանման միջոցի կիրառման շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելու դեպքում նրանց տեղաշարժման ազատությունը սահմանափակելու հետ կապված իրավակարգավորումներում առկա էին անհստակություններ, որոնք չարաշահումների տեղիք էին տալիս:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն արձանագրելով, որ Հայաստանի Հանրապետությունում իրավունքի սահմանափակման բոլոր դեպքերը և հիմքերը, ներառյալ մարդու ազատ տեղաշարժվելու իրավունքը, նախատեսվում են ՀՀ Սահմանադրությամբ, իսկ առավել մանրամասն կարգավորումն իրականացվում է օրենքով: Բացի դրանից, ամրագրել է, որ ՀՀ կառավարությունը որոշումներ ընդունելիս պետք է առավել մանրամասնի օրենքում արդեն իսկ ամրագրված սահմանափակման կիրառման կարգը, այլ ոչ թե նախատեսի իրավունքի նոր սահմանափակումներ: Ընդ որում, այդ սահմանափակումները չպետք է դուրս գան սահմանափակման՝ Սահմանադրությամբ նախատեսված ծավալից և չպետք է գերազանցեն Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններով նախատեսված սահմանափակումները:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն ամրագրել է՝ իրավակիրառողը պետք է ա/ կասկածյալից կամ մեղադրյալից անձնագիրը վերցնի բացառապես նրանց նկատմամբ խափանման միջոցի կիրառման դեպքում, բ/ խափանման միջոցի վերացման պահին անձնագիրն անհապաղ վերադարձնի, գ/ խափանման միջոցի վերացման մասին տեղեկությունները ՄԷԿՏ համակարգ ուղարկի խափանման միջոցի վերացման պահին:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու և դրա հիման վրա Մարդու իրավունքների

պաշտպանի կողմից օրենսդրական նախաձեռնության իրավասություն ունեցող պետական մարմիններին և/կամ պաշտոնատար անձանց համապատասխան առաջարկներ ներկայացնելու նպատակով ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցներից ձևավորվել է աշխատանքային խումբ, որի գործունեության արդյունքում հստակեցվել են օրենսդրության այն ոլորտները և այն նորմատիվ իրավական ակտերը, որոնցում, ի կատարումն ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից պատրաստվելու են համապատասխան առաջարկներ: Մասնավորապես՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՄԴՈ-1220 և ՄԴՈ-1293 որոշումների հիման վրա առաջարկներ են ներկայացվելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելու, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ, քանի որ նույն խնդիրն առկա է նաև նշված օրենսգրքերում, ՄԴՈ-1190, ՄԴՈ-1192, ՄԴՈ-1222, ՄԴՈ-1231, ՄԴՈ-1314 որոշումների հիման վրա առաջարկներ են ներկայացվելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում, իսկ ՄԴՈ-1294 որոշման հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

**ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ՝ 2017Թ. ԵՎ ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻՆ
ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆԹԱՅՔՈՒՄ**

2017 թվականին Սահմանադրական դատարանի տվյալ և նախորդ տարիներին ընդունած որոշումների և իրավական դիրքորոշումների իրացումն զգալի չափով պայմանավորված է 2015թ. ՀՀ սահմանադրական փոփոխությունների օրենսդրական ապահովման խնդրի լուծմամբ: Դրանք վերաբերում են ինչպես նոր սահմանադրական օրենքների ընդունմանը, այնպես էլ ՀՀ Նախագահի 2016թ. փետրվարի 10-ի հրամանագրով սահմանված՝ «Սահմանադրական փոփոխություններով անվանակա-

նորեն սահմանված և ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների» ընդունմանը:

ՀՀ Ազգային ժողովի կողմից, հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017թ. ընթացքում ընդունած, ինչպես նաև 2016թ. ընթացքում ընդունած, մասնավորապես, ՄԴՈ-1252, ՄԴՈ-1254, ՄԴՈ-1268, ՄԴՈ-1289, ՄԴՈ-1293, ՄԴՈ-1294, ՄԴՈ-1302, ՄԴՈ-1304, ՄԴՈ-1314, ՄԴՈ-1315, ՄԴՈ-1316, ՄԴՈ-1325 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, առավել մեծ երաշխիքներ կստեղծվեն սահմանադրական փոփոխությունները կյանքի կոչելու համար:

ՀՀ Ազգային ժողովն **ամբողջությամբ ընդունել է** «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին **Կ-056-07.07.2017-ԱՍ-011/2** օրինագիծը՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի նոյեմբերի 29-ի ՄԴՈ-1325 որոշման կապակցությամբ:

Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ 2015թ. հունիսի 26-ին «Քաղաքացի Սամվել Ալավերդյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով կայացվել է ՄԴՈ-1222 որոշումը: Այս որոշմամբ Սահմանադրական դատարանը Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածն այն առումով, որով արգելափակվում է ուժի մեջ մտած դատական ակտերի օրինականության վիճարկումը «նոր երևան եկած» իրավաչափ այլ հանգամանքների հիմքերով՝ հանգեցնելով անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների սահմանափակման, ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածներին, 6-րդ հոդվածի երկրորդ մասին, 18-րդ և 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ Սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերը ՀՀ Սահմանա-

դրությանը հակասող և անվավեր ճանաչելը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի ուժը կորցնելու արդյունքում հաստատվելիք իրավական անվտանգությունը, Մահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչված նորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանել 2015թ. դեկտեմբերի 31-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին վերոհիշյալ իրավակարգավորումը համապատասխանեցնել ՄԴՌ-1222 որոշման պահանջներին:

Մահմանադրական դատարանն իր՝ 2015թ. որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդման մեջ արձանագրել է, որ «2015 թվականին ՀՀ Ազգային ժողովը, ինչպես նաև ՀՀ կառավարությունը, ՀՀ սահմանադրական դատարանի 26.06.2015թ. ՄԴՌ-1222 որոշման ընդունումից հետո, նշյալ իրավական ակտում փոփոխություն կատարելու հարցին դեռևս չեն անդրադարձել: Ստեղծված իրավիճակը սահմանադրական դատարանի կողմից գնահատվում է անընդունելի և իրավական պետության սահմանադրաիրավական պահանջներին ոչ հարիր...»¹:

Մահմանադրական դատարանն իր՝ 2016թ. որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդման² մեջ կրկին արձանագրել է, որ Ազգային ժողովը ՄԴՌ-1222 որոշմանը չի համապատասխանեցրել վեճի առարկա կարգավորումը (շուրջ 1 տարի, 7 ամիս), և չի կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, ինչն անհրաժեշտ է Մահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարումը երաշխավորելու, հետևաբար՝ նաև իրավական պետության սահմանադրական սկզբունքը գործնականում իրացնելու համար:

Ըստ Ազգային ժողովի պաշտոնական կայքէջի տվյալների՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու մասին համապատասխան օրենքի նախագիծը³ (Պ-942-04.02.2016, 01.04.2016-ՊԻ-010/0) **04.04.2016թ.** ընդգրկվել է նախորդ գումարման ԱԺ չորսօրյա նիստերի

¹ http://concourt.am/armenian/report/statistic/cc_decision_stat2015.pdf, էջ 19

² http://concourt.am/armenian/report/statistic/cc_decision_stat2016.pdf, էջ 37

³ <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=40356>

օրակարգ⁴: Սակայն այն մինչ օրս չի ընդունվել: Ընդ որում, նոր գումարման Ազգային ժողովի պաշտոնական կայքէջի «Նախագծեր» բաժնում այս նախագիծն ընդգրկված չէ⁵:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ 2017 թվականի հիմնական առանձնահատկությունն այն էր, որ դատարանն առավել մեծ ուշադրություն դարձրեց 2015թ. սահմանադրական փոփոխությունների հիման վրա մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության և իրավունքի գերակայության սկզբունքի իրացման հարցերին:

Միաժամանակ կարևորվում է այն հանգամանքը, որ օրինաստեղծ ողջ գործունեությունն ուղղված է եղել սահմանադրական փոփոխությունների օրենսդրական ապահովմանը: Այս խնդրի արդյունավետ լուծմանը՝ նաև 2018թ. օրինաստեղծ քաղաքականության շրջանակներում, էապես կարող է նպաստել Սահմանադրական դատարանի որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումների հետևողական իրացումը:

⁴ http://parliament.am/draft_history.php?id=8090

⁵ <http://parliament.am/drafts.php?lang=arm>